№ 81 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 19 ԱՊՐԻԼԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 19 ԱՊՐԻԼԻ № 81

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak".

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարվում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и Ко, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Այսօր, հինգշաբթի, ապրիլի 19-ին

ԻՍԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

մահվան տարեդարձի օրը Վանքի մայր-եկեղեցում կը մատուցվի պատարագ, որից յետոյ տեղի կունենայ հոգեհանգիստ հանգուցեալի գերեզմանի վրա։ Այդ մասին հանգուցեալի որդիները և դուստրները յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին.

Պատարագի սկիզբը առաւօտեան ժամը $10\frac{1}{2}$-ին, իսկ հոգեհանգիստը ժամը 12-ին։

260. 2—2

Այսօր, ապրիլի 19-ին, ցերեկվայ ժամը $1\frac{1}{2}$-ին, ՄԱՆԹԱՇԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ պատուաւոր հոգաբարձու

ԻՍԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

մահվան առաջին տարեդարձի առիթով յիշեալ Դպրոցում (Բէբուտովսկայա, № 50) կը կատարվի հոգեհանգիստ, որի մասին յայտնում են Դպրոցի Հոգաբարձական Խորհուրդը և Մանկավարժական Կոմիտէն։

263. 1—1

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳ. ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրտանով յայտարարում է, որ այսօր, հինգշաբթի, ապրիլի 19-ին, ցերեկվայ ժամը 1-ին դպրոցում կատարվելու է

ԴՊՐՈՑԻՍ ԲԱՐԵՐԱՐ
հանգուցեալ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

հոգեհանգստեան կարգը։

264. 1—1

Այրի ՄԱՆԻԱ ԲԱՂԴԻԵԱՆՑԸ ցաւակներով յայտնում է իր շնորհակալութիւնը բոլոր այն անձերին, որոնք թէ անձամբ և թէ նամակներով ու հեռագրերով արտայայտել են իրանց ցաւակցութիւնը իր ամուսնու՝

ՍԱՐԳԻՍ ԲԱՂԴԻԵԱՆՑԻ

մահվան առիթով։

262. 1—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

նշանակված է շաբաթ, ապրիլի 21-ին, երեկոյեան ժամը $7\frac{1}{2}$-ին Ընկերութեան դահլիճում (Արամ-Աբաղեան հրապարակ № 7, սեփ. տուն)։

Ընդհանուր ժողովի զբաղմունքների առարկաներն են

1) Քննութիւն Ընկ. կենտրոնի և ճիւղերի 1911 թ. հաշիւների և գործունէութեան՝ վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցման հետ, և հաստատումն այդ հաշիւների։
2) Մի քանի ճիւղերի նախահաշիւների քննութիւնը և հաստատումը։
3) Ընտրութիւն հերթով հեռացող խորհրդի անդամներ՝ բժ. Բ. Ազատբեկեանի, Ս. Մելքումեանի, Ալեք. Շահիկեանի և ինքնակամ հրաժարված Յովհ. Սպենդիարեանի փոխարէն, խորհրդի 4 փոխ-անդամի, վերաստուգիչ յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխ-անդամի։
4) Դպրոցական-Ուսուցչական ֆօնդի կանխիկ գումարները վերածելու տոկոսաբեր թղթերի։

Այս ժողովին հրաւիրվում են նաև Ընկ. ճիւղերի ներկայացուցիչները։

Ընկերութեան տեղեկագիրը կարելի է ստանալ Խորհրդի գրասենեակից։

(հ. 2.) առ. 259. 3—2

ՋՈՒԼՖԱ—ԹԱՒՐԻԶ
ԱՒՏՈՄՕԲԻԼԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարդատար աւտոմօբիլների մեկնումը ՋՈՒԼՖԱՅԻՑ երկուշաբթի, չորեքշաբթի և շաբաթ օրերը՝ մօտաւորապէս առաւօտեան ժամը 10-ին։ ԹԱՒՐԻԶԻՑ մեկնումը կիրակի, երեքշաբթի և ուրբաթ օրերը՝ առաւօտեան ժամը 9-ին։ Մարդատար աւտոմօբիլները երթևեկում են Ռուսական Մաքսատան և Թաւրիզինոր կայարանի (Աստղաբաշխական կամուրջի) միջև։ Տոմսակները կարելի է ստանալ Արզումանեանցների գրասենեակում, Սերգիեվսկայա № 7.

(հ.) առ. 196. 4—4

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ ԱԼՄԱՆԱԽ ՏԱՐԱԶ

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ մահվան քառասունքին, ապրիլի 25-ին, լոյս կը տեսնէ ՏԱՐԱԶԻ բացառիկ № 4 Ալմանախ, նուիրված նահապետ-դրամատուրգին, իր և իր շուրջ մեծաքանակ պատկերներով։ Այս հրատարակութեան գինը մինչև ներկայ ապրիլի 15-ը՝ ՄԷԿ րուբլի, այնուհետև մինչև ապրիլի 25-ը՝ ԵՐԿՈՒ րուբլի, իսկ լոյս տեսնելուց յետոյ՝ ԵՐԵՔ րուբլի։

Դիմել՝ Бюро Печати, Тифлисъ. Головинскій пр., 41.

առ. 26. 0—3

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Համալի Մալախաբիրը
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
Գինն է 30 կոպ.

Այս գրքի վաճառումից գոյացած գումարը յատկացվելու է «ՄՇԱԿԻ» ապահովութեան ֆօնդին։

Հասցէն՝ Тифлисъ, Ред. газ. „Мшакъ", կամ Tiflis, Rédaction du journal arménien „Mschak".

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
ՊՐՈՖԷՍՈՐ ՊՕԶՆԷՐԻ ԱՍԻՍՏԵՆՏ
Խորհրդակցական կաբինետ Բեռլինում։

Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին։ Նաև կոնսուլտացիա միւս մասնագիտութիւններից։

Հասցէն՝ D-r Muradoff, Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon Amt Norden 113—19.

(հ.հ.կ.) առ. 242. 12—4

ԲԺԻՇԿ
Գր. ՄԱԿԱՐԵԱՆ
Ներքին եւ երեխայոց
հիւանդութիւններ

Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանովսկայա փողոց, տուն Սէյլանովի, № 18, տելեֆոն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(հ.հ.կ.) առ. 819. 100—89

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱԶԳԵՐԸ

Կ. Պոլսից հեռագրում են, թէ «երիտասարդ թիւրքական» մամուլը և «Իթթիհադ» կամ «Միութիւն և Առաջադիմութիւն» կուսակցութեանը մօտիկ կանգնած քաղաքական շրջանները դժգոհ են ռուսաց արտաքին գործերի մինիստր Սազօնովի ճառից, որի մէջ խօսվում է բարեկամական յարաբերութիւնների մասին Ռուսաստանի և Իտալիայի միջև, և մանաւանդ նրա այն խօսքերից, թէ Ռուսաստանի քաղաքականութիւնը Բալկաններում՝ քրիստոնեայ ազգութիւնները պաշտպանելու քաղաքականութիւնն է։

Ինչպէս յայտնի է, ներկայումս Թիւրքիան կառավարողը և նրա ներքին ու արտաքին քաղաքականութիւնը վարողը Իթթիհադի կուսակցութիւնն է, որ յաղթող հանդիսացաւ և վերջին պարլամենտական ընտրութիւնների մէջ։

Ուրեմն, Թիւրքաց կառավարութեան և պարլամենտի համար մեծապէս անհաճելի է, որ Ռուսաստանը յայտարարում է, թէ իր քաղաքականութիւնն է պաշտպանել Մերձաւոր Արևելքի քրիստոնեայ ազգութիւնները։

Յայտնի է, որ այդ քաղաքականութիւնը Ռուսաստանի համար նոր չէ. նա աւանդական է, նա պատմական է, նա բղխում է ռուսական մեծ ազգի ամբողջ պատմութիւնից։ Ռուսաստանն է ազատարար հանդիսացել Արևելքի ճնշված, հարստահարված և մահմեդական բռնակալութեան ներքոյ հեծեծող ազգութիւնների։ Ռուսաստանը ազատեց հայ քրիստոնեայ ժողովրդի մեծ մասը պարսկական լծից։ Ռուսաստանը ստեղծեց Թիւրքիայի հայ ժողովրդի ազատագրութեան համար Սան-Ստեֆանօյի դաշնագիրը։ Ռուսաստանը ազատեց սերբերին, չերնօգորցիներին, բուլղարներին անարգ լծից։

Ճիշդ է, պահ մի, հանգուցեալ իշխան Լոբանովի մինիստրութեան օրով, Ռուսաստանը շեղվեց իր պատմական, աւանդական քաղաքականութիւնից և երեսի վրա թողեց թշուառ հայ ժողովրդին Թիւրքիայում, և այդ հանգամանքից կարմիր սուլթան Աբդիւլ-Համիդը օգտվելով, ջարդել տուեց հայ ժողովուրդը։ Բայց մենք տեսնում ենք, որ Ռուսաստանը այսօր վերադարձել է իր աւանդական քաղաքականութեան, իր պատմական փառաւոր միսիային՝ պաշտպան և հովանաւոր լինել Մերձաւոր Արևելքի քրիստոնեայ ազգութիւններին։

Եւ ինչու համար է այդ քաղաքականութիւնը ցաւ և դժգոհութիւն պատճառում «երիտասարդ-թիւրքերին»։ Եթէ այժմեան Թիւրք կառավարութիւնը անկեղծօրէն ձգտում է նոր իրաւակարգի, նոր պետական կեանքի ստեղծման, հաւասար և արդար ամենքի, Թիւրքիայի բոլոր ազգութիւնների համար, նա ոչ մի վախ չը պէտք է ունենայ ռուսական քաղաքականութիւնից, որ ոչ մի ագրէսիվ, նուաճողական բնաւորութիւն չունի։ Բայց եթէ «երիտասարդ-թիւրքերը» արտաքուստ այլ բան են քարոզում, իսկ ներքուստ այլ ծրագիրներ ունեն՝ իրանց պետութեան քրիստոնեայ ազգութիւնների վերաբերմամբ—իսկ այդպիսի կասկած վաղուց ծանրանում է նրանց վրա,—այդ դէպքում մենք, ի հարկէ, փափագելով պէտք է փափագենք, որ Ռուսաստանը ամուր կանգնէ իր բռնած դիրքի վրա, և պէտք է երախտագիտութեամբ ողջունենք Սազօնովի ճառը, որ գալիս է զգացնելու «երիտասարդ-թիւրքերին», թէ Ռուսաստանը այլ ևս թոյլ չի տայ բուլղարական, հայկական պէս արհաւիրքներ։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 ապրիլի

Պետերբուրգ.—Գործադուլ բանւորների թիւը մօտ 22 000 է։

Կազանի տաճարի հրապարակի վրա ցոյցի համար ժողոված ուսանողներին, ուսանողուհիներին և բանւորներին ցրեց ոստիկանութիւնը։ Կատարվեց 40 ձերբակալութիւն։

Մոսկվա.—Համալսարանում քննութեան համար ստորագրվելու ժամանակ մի խումբ ուսանողներ, թւով 50 հոգի, իբրև ցոյց երգեցին «յաւերժ յիշատակ» Լենայի դէպքերի առիթով։ Ոստիկանութիւնը կալանաւորեց երեքին։ Մնացած ուսանողները, թւով 500 հոգի, խաղաղ ցրվեցին՝ չը համակրելով ցոյցին։

Ռոստով Դ./Վ.—Բորսայի կոմիտէտը մի մասնաժողով հաստատեց Դարդանէլի փակման պատճառով առևտրի ու նաւագնացութեան ստացած վնասները որոշելու համար։

Զմիւռնիա.—Տեղական մի շոգենաւ նեղուց մտնելու ժամանակ ընդհարվեց լողացող ականի և ջրասուզվեց։ 140 մարդ խեղդվեցին։

Լոնդոն.—Կանադայի և Միացեալ Պետութիւնների միջև մաքսային յարաբերութեան մասին կատարվող բանակցութիւններին և այդ հողի վրա Տաֆտի և Ռուզվէլտի միջև տեղի ունեցած ընդհարմանը վերաբերեալ մերկացումները սենսացիա առաջ բերին Կանադայում։ Տաֆտը իր նամակի մէջ ասում է, որ մաքսային փոխադարձութեան մասին կապված համաձայնութեան նպատակն է Կանադան միացնել Միացեալ Պետութիւններին իբրև աւելորդ կտոր։ Տեղիս պահպանողական մամուլը մատնանշում է այդօրինակ պայմանի բովանդակ անհեթեթութիւնը։ Լիբերալ մամուլը յուզված է։

Համայնքների պալատում Ասկվիտը յայտնեց, որ Անգլիայի և Գերմանիայի յարաբերութիւնները թոյլ են տալիս բարեկամաբար քննել փոխադարձ շահեր ներկայացող խնդիրները։

Վիեննա.—Այսօրվայ համայնական ընտրութիւններին ընտրվեցին 32 քրիստոնեայ և 2 առաջադիմական գերմանացի։ Լինելու են 14 կրկնաքուէարկութիւն։ Մինչև օրս բոլոր 48 մանդատները պատկանում էին քրիստոնեայ սօցիալիստներին։

Բացվեց ունգարական պատգամաւորական նստաշրջանը։ Արտաքին գործերի մինիստր կոմս Բէրտհօլդը բացատրութիւն տուեց Աւստրո-Ունգարիայի արտաքին քաղաքականութեան առիթով. բացատրութիւնը ընդունվեց համակրանքով։ Ընդգծելով, որ Աւստրո-Ունգարիայի յարաբերութիւնները մեծ պետութիւնների հետ բարեկամական են, մինիստրը ասում է. «Մեր քաղաքականութիւնը հանդիսանում է խաղաղութեան ու կայունութեան քաղաքականութիւն։ Դէպի Ռուսաստանը մեր յարաբերութիւնները առանձին ուշադրութեան առարկայ են դարձած։ Մենք գոհունակութեամբ ընդունում ենք ի տեղեկութիւն Սազօնովի յայտարարութիւնը և համաձայնվում ենք այն մտքի հետ, թէ դրանով գնահատելի երաշխաւորութիւն է տրվում աւստրո-ռուսական փոխադարձ յարաբերութիւնները բարեկամաբար զարգացնելու համար։

Դարդանէլի փակման նկատմամբ մինիստրը յայտնում է, որ դրա վրա դարձված է Թիւրքիայի ուշադրութիւնը։

Պարիզ.—Հավասը հաղորդում է. «Ֆէզի դէպքերի մասին դեսպան Րէնի կատարած քննութիւնը պարզեց, որ զօրքերի գրգռումը հետևանք է ռոճիկները չը ստանալուն և զինւորներին այն երկիւղից՝ թէ իրանց ստիպելու են կրել պայուսակներ. հովանաւորութեան մասին ստորագրված պայմանագիրը յամենայն դէպս առիթ չը ծառայեց. արտասահմանեան ագիտացիայի ոչ մի հետք չը կայ. սուլթանի և վէզիրների գործելակերպը կասկածից դուրս է. հրէաները դրդիչների դեր չը կատարեցին. ապստամբութիւնը վաղօրօք կազմակերպված չէր. ոչինչ բան չէր տալիս հնարաւորութիւն նախատեսել այն»։

Լիսաբոն.—Դէպի Սպանիա յետ մղվեցին մի խումբ միապետականներ, որոնք փորձում էին անցնել սահմանը։

Մելիլիա.—Տեղացի զինւորները յարձակվեցին սպանական զօրամասի վրա և սպանեցին երկու զինւորի։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԵՅԽՍՏԱԳՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 ապրիլի

Բեռլին.—Ռէյխստագի բիւջէտային մասնաժողովի մէջ զինւորական մինիստրը ցաւակցութիւն յայտնեց, որ մենամարտի մասին իր արած յայտարարութիւնները գրգռել են կաթոլիկներին։ Նրա խօսքերը չեն հասկացել. նա նպատակ չունէր վիրաւորել կրօնական զգացմունքները. օֆիցէրների միջավայրին նա վերաբերում է այլ կերպ, համարելով մենամարտը միակ հնարաւորութիւնը՝ պատիւը վերականգնելու համար։

Գանդէլստագում Ռոտտէրդամի կողմից առաջարկութիւն ստացվեց գումարելու հացավաճառների համագումար Դարդանէլը փակելու առիթով։ Գանդէլստագը միջնորդութիւնը մերժեց։ Գերմանական կառավարութիւնը ընդունում է, որ Թիւրքիան իրաւունք ունի փակել Դարդանէլը։

Ոստիկանական վարչութիւնների նախահաշւի քննութեան ժամանակ լանդտագում կենտրոնի ներկայացուցիչը մատնանշում է, թէ անհրաժեշտ է պետական ոստիկանութիւն մտցնել Վերին Սիլեզիայի շրջանում, որովհետև դիւրութեամբ յանցագործները կարող են անցնել Ռուսաստանից և Գալիցիայից. չը նայած անցաթղթային դժուարութիւններին՝ շատ կօնտրաբանդիստներ անցնում են սահմանը. անհրաժեշտ է համաձայնութիւն կապել՝ իրաւունք տալու ոստիկանութեանը հետևել յանցագործներին սահմանի վրայով։

Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, լեհերի թիւը Պրուսիայում կազմում է $3\frac{1}{2}$ միլիոն։ Ազգաբնակութեան թիւը աւելանում է միայն Պօզնանում և Ալենշտէյնում։ Ընդհանուր առմամբ Արեւելեան Պրուսիայում աւելացել է գերմանացիների թիւը, իսկ ընդհակառակն Արեւմտեան Պրուսիայում աւելացել է լեհերի թիւը, որը արդիւնաբերական շրջաններում հասել է $12^0/_0$-ի։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 ապրիլի

Պեկին.— Խորհրդակցական ժողովի բացման առիթով արտասանած իր ճառի մէջ նախագահը վկայեց, որ Չինաստանի ներկայ ֆինանսական դրութիւնը շատ ծանր է և որ անհրաժեշտ է արտասահմանեան խոշոր փոխառութիւն։ Ընդ սմին աւելացուելու են մաքսերը, կանօնաւորուելու են աղի գործը և հողային տուրքերը, գործադրուելու են մի շարք ֆինանսական ու դրամական բարենորոգումներ։ Ուշադրութիւն կը դարձուի արդիւնաբերութեան ու երկրագործութեան զարգացման վրա։ Նախագահը յոյս արտայայտեց, թէ ազգաբնակութիւնը ցոյց կը տայ կառավարութեանը վստահութիւն և աջակցութիւն։

Կուանչենցզի.— Ոստիկանական և կանօնաւոր զօրքերի մշտական ընդհարումները դրդեցին չինական իշխանութիւններին դուրս հանել երկուսից էլ խոշոր մասը։

Որովհետև հարաւից շարունակ մեծ թւով չին բանուորներ են գալիս, որոնք դիմում են Ռուսաստանի սահմանները, դատայը ռուսաց հիւպատոսի խնդիրքով յայտարարեց, որ Ամուրի երկաթուղու աշխատանքներին չինացիներ չեն ընդունվելու։

Կուլջա.— Ակսուում բռնկվեցին անկարգութիւններ։ Սպանվել է դատայը։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԻՆ

Վերջին արարուածը *)

Կ. Պոլիս, 6/19 ապրիլ

Դաշնակցականները՝ իրենց այս առանձնացման ու մեկուսացման մէջ միայնակ հասկցան, թէ ինչ տագնապի մատնուած էին և վարկերնին ըլլալու վիճակին մատնուած էին։ Բացորոշ էր, թէ անոնք պարզապէս ազգը խաբած էին ընդհանուր համերաշխութեամբ գործելու խոստում տալով, և միայն իրենց դրամական շահերն ապահովելով, միւս կողմէ Իթթիհատը խաբած էին ազգը համախումբ իրենց բերելու խոստում տուած ըլլալով և չկարենալով գործադրել։

Եւ անոնք, որ պատրիարքարանի հեղինակութիւնը կուրանային, որոնք կը մերժէին ազգ. ժողովի իրաւասութիւնը օսմ. երեսփ. ժողովին հայ կանդիդատները որոշելու խնդրոյն մէջ, որոնք վերջապէս պատրիարքին կողմէ կատարուած բարեխօսութիւն մը ազգին համար աղէտաբեր ու կործանարար կը նկատէին, ձեռքը փրկելու համար և իրենց ինքնագլուխ որոշած կանդիդաներուն ազգային հանգամանք տալու համար, այս անգամ հայոց և հայ-հռոմէականաց պատրիարքարաններուն պաշտօնապէս կը ծանուցանեն իրենց թեկնածուները և անոնց գաւառները յանձնարարուիլը կը խնդրեն։

Այս պաշտօնագիրը, որ հակասութեան մը մէջ կը դնէր Դաշնակցութիւնը և իրենց արբանեակները և սուտերով լի էր, մէջ կը բերենք իր կարգին նոյնութեամբ։

Ամենապատիւ ս. հայր.

Համերաշխութեան ժողովը կուգայ յայտնել ձերդ սրբազնութեան, որ 1912 ապրիլ 1 թուակիր մեր յայտարարութեան համաձայն, որուն տակ ստորագրած են Հ. Յ. Դաշնակցութեան, Վեր. Հնչ. կուսակցութեան, ազգ. ժողովի կեդրոնի, ազատական և անկախ խմբակցութեանց, ինչպէս նաև հայ-կաթոլիկ և հայ-բողոքական յարանուանութեանց ներկայացուցիչները, վերջապէս համաձայնութիւն գոյացուցած են հետեւեալ ցուցակին վրայ, զոր կը խնդրենք, որ հաճիք հաղորդել ձեր իրաւասութեան ենթակայ ազգ. իշխանութեանց ըստ համերաշխական ժողովի կանխագոյն որոշման.

ա) Ամասիա՝ պրոֆ. Կ. Թումայեան։
բ) Ադանա՝ Մինաս Չերազ։
գ) Իզմիթ՝ Հմայեակ Խոսրովեան։
դ) Կարին՝ Վարդգէս Սէրէնկիւլեան և Գարեգին Փաստրմաճեան։
ե) Մարաշ՝ Մանուկ Մարիկեան։
զ) Մուշ՝ Առաքել Սիմոնեան։
է) Պոլիս՝ Գրիգոր Զոհրապ և Պետրոս Հալաճեան։
ը) Րոդոսթօ՝ Սմբատ Քեաթիպեան։
թ) Վան՝ Օննիկ Դերձակեան։

Ծան. Ա.— Այս ցանկէն դուրս կը մնան Իզմիր, Կեսարիա և Սըվազ, ուր արդէն կատարուած են ընտրութիւնները։

Ծան. Բ.— Իսկ Հալէպի երեսփ. ընտրութեան մասնակցած չեն համերաշխական ժողովին մասնակցող մարմինները։

Հարկ կը զգանք աւելցնել հոս, թէ կեդրոնի և անկախ խմբակցութեան թերթերու մէջ հրատարակած նման յայտարարութիւնները ոևէ իրաւական հիմ չունին, նըկատելով որ անկախ խմբակցութեան ձեռնպահութիւնը պատճառաբանեալ չէ, իսկ կեդրոնի խմբակի անտեղեկութեան մասին գաղափար մը տալու համար հոս կը դնենք իր լիազօրներուն համաձայնագիրը, որուն վրայ է որ հրատարակուեցաւ ապրիլ 1 թուակիր մեր հետեւեալ յայտարարութիւնը.

Պերա, 19 մարտ 1912

Հ. Յ. Դաշնակցութեան կեդր. կոմիտէի պատուիրակները և ազգ. ժողովի կեդրոնի խմբակցութեան ներկայացուցիչները փոխադարձ համաձայնութեան եկան հետեւեալ կէտերուն վրայ՝

Ա.— Դաշնակցականներուն ձեռնհաս մարմինը՝ պ. Մինաս Չերազի երեսփ. ընտրութիւնը պիտի յաջողցնէ ոևէ վայրէ մը Կ. Պոլսոյ երեսփ. ընտրութենէն առաջ։

Բ.— Կեդրոնի խմբակցութիւնը իր պաշտօնական ամբողջ աջակցութիւնը պիտի նուիրէ թէ Կ. Պոլսոյ դաշնակցական ցանկին քուէարկման և թէ գաւառներու դաշնակցական երեսփ. ընտրութեանը մէջ։

Գ.— Երկու կողմերէն մէկն ու միւսը իր յանձնառութիւնը չկատարելու պարագային միւս կողմը զերծ պիտի համարուի իրեն վերաբերող յանձնառութենէն։

Ազգ. ժողովոյ կեդրոնի խմբ. կողմէ՝ Ս. Սուրէն, Ն. Օհանեան և Հ. Խօճասարեան.

Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ կեդր. կոմիտէ՝ Ա. Վռամեան, Վ. Փափազեան։

Արդ, ինչպէս կը տեսնուի սոյն պայմանագրէն, ոչ միայն կեդրոնի խմբակցութեան գոհացում տրուած է այսօր, այլ նաև ճշմարտութեան հակառակ է կեդրոնի պաշտօնական յայտարարութեան այն տողերը, թէ «յանձնախումբին խորհրդակցութեանց վրայ՝ ազգ. իրաւանց և շահերու տեսակէտը չէ որ կը տիրէ»։

Համերաշխական ժողովը իր ստանձնած պարտականութիւնները կատարուած համարելով՝ անմիջապէս որ բոլոր ընտրութիւնները վերջնական պիտի լուծուիլ, առգրուած՝ այն յոյսով թէ կարելի պիտի ըլլայ զօրաւոր հայ խմբակ մը կազմել յառաջիկայ օսմ. խորհրդարանին մէջ, և ապրիլ 1 թուակիր մեր պահանջագրին և ազգ. իրաւանց պաշտպանման գործը ապահովել։

Մաղթելով ի համբոյր ս. աջոյդ

Համերաշխական ժողովի
Ատենապետ՝ Ս. Գարայեան
Ատենադպիր՝ Գ. Ոսկեան

Այս խաբէական պաշտօնագիրէն ինչպէս կը տեսնուի, կեդրոնին, բողոքականաց և հայ-հռոմէականաց ընտրելիներուն համար որոշուած են այնպիսի տեղեր, ուր բնաւ հաւանականութիւն չկայ իրենց ընտրութեան։ Իսկ դաշնակցական ընտրելիներուն վերապահուած են այն աթոռները, որոնք մեծ բաւականութիւն կը ներկայացնեն յաջողութեան։

Պրոֆ. Թումայեանը (հայ-բողոքականաց ընտրելին) Ամասիոյ ընտրելի առաջարկել՝ պարզ հեգնութիւն է, քանի որ հոն ընտրութիւնը արդէն վերջացած է։

Ադանայի մէջ Չերազի (կեդրոնի ընտրելի) ընտրութիւնը շատ երկբայելի է։ Հոս աւելորդ չըլլար ըսել թէ դաշնակցականները կեդրոնի հետ իրենց յարաբերութիւնները խզելէ յետոյ հազար աղաչանքով նորէն համաձայնելու առաջարկ ըրին և, ինչպէս յայտնի է, ստորագրութեամբ խոստացան Կ. Պոլսոյ ընտրութիւններէն առաջ Մինաս Չերազի ընտրութիւնը կատարել։ Յետոյ իրենց այս խոստումը դրժեցին առանց խիղճ ու ամօթ զգալու։

Մարաշի համար որոշուած հայ-հռոմէականաց ընտրելի Մարիկեան երբեք հաւանական չէ որ յաջողի, զի Մարաշի մէջ հայեր բաւական համեմատութեամբ աննշան թիւ կը կազմեն՝ բաղդատմամբ միւս ազգերու։

Այս պայմաններու մէջ՝ բնական է թէ կեդրոնը անտարբեր չէր կրնար մնալ և մարսել այն բոլոր սուտերն ու պաշտօնական խարդախութիւնները, որոնք կուզէին հաւատացնել հասարակութեան։ Ուստի անմիջապէս հրատարակութեան տուաւ սա յայտարարութիւնը։ Շառայլ

(Կը շարունակվի)

---

*) Տես «Մշակ» № 80.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ «ՄՇԱԿԻ» 40-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Սկսած այն օրից, երբ «Մշակը» իր 40-ամեայ յոբելեանի առիթով բաց արեց իր էջերը, խեղճ հայ ընթերցողի առջև դրված այդ թերթը լցվեց բազմատեսակ յօդուածներով։ Ամեն մէկն աշխատում է արտայայտել իր յիշողութիւնները, տպաւորութիւնները, ձօնելով «սիրեցեալ» «Մշակին» փայլուն ներբողներ, բարեմաղթութիւններ։

Բայց մի բան էլ կայ, որ չը պէտք է մոռացութեան տալ. բարեմաղթութիւնը շատ լաւ բան է, առաջացնում է ոգևորութիւն, սէր դէպի ընտրած ասպարէզը, սակայն պէտք է հոգալ նոյնպէս այդ կարևոր գործօնի պահպանութեան համար։

Ինչպէս «Մշակը», այնպէս և մեր բոլոր միւս թերթերն իրանց գոյութիւնը պահպանում են գլխաւորապէս բաժանորդագներով։

Մեր հայկական իրականութեան մէջ, ուր առողջ հրապարակախօսական մտքի ուժեղ նշանակութեան գիտակցութիւնը դեռ ևս լայն չափով չէ զարգացել, հայ օրգանը ենթակայ է նիւթականապէս տանջալից օրերի։ Հայը կարդալ չէ սիրում, ուստի և թերթերի գործակալների թախանձանքի, անչափ եռանդի և զանազան տեսակ հնարների միջոցով է աջողվում ստանալ տարեկան բաժանորդների բաւարար թիւ։

Սակայն ազատ գիտակցական կամքի բացակայութիւնը կառաջացնի շատ շուտով պառակտումն, և մի տարի ակամայից թերթ ստացող բաժանորդը յաջորդ տարի կը հրաժարվի ուղարկել բաժանորդագինը։ Այդպիսով ոչ մի հայ թերթ չի կարող պատահական բաժանորդների շատութեամբ երաշխաւորել իր ապագայի գոյութիւնը։

Ուրեմն «Մշակը», որ այժմ շնորհիւ իր քիչ թէ շատ լայն չափով տարածվելուն մի կերպ անցնում է հրապարակախօսութեան փշոտ ճանապարհով, ապագայում կարող է ենթարկվել այն վտանգին, որը մեր՝ սունկի նման բուսնող թերթերին արագութեամբ ջնջում է հրապարակի վրայից։

Կարևոր է մտածել մի աւելի հաստատուն միջոց, որով «Մշակը» ընդմիշտ ապահովված համարվի։ Ճիշդ է, յաճախ կարդում ենք, որ մօտալուտ յոբելեանի առիթով բազմաթիւ անձինք իրանց միջոցներով «Մշակի» համարները ղրկում են մեր գաւառների խուլ անկիւններում, սակայն դա միայն ժամանակաւոր ապահովութիւն է։

Այսպիսի դէպքերում ընդունված է, հասարակութեան ուշադրութիւնն ի նկատի ունենալով, հիմնել ֆոնդ։

Ուստի ես կառաջարկէի «Մշակի» փառաբանողներին և առհասարակ բոլոր համակրողներին խմբվել մի ընդհանուր դրօշակի տակ հիմնել մի հաստատուն ֆոնդ, մտցնելով այնտեղ ըստ կարողութեան իրանց լումաները։ Հաւաքված գումարը կը դառնայ մի անձեռնմխելի հարստութիւն, որի բերած տոկոսիքով «Մշակը» ընդ միշտ կապահովի իր օգտակար գոյութիւնը։ Ես կարծում եմ, որ բազմաթիւ գովեստները կը լինեն անհամեմատ աւելի գործնական օգնութեան։

Ամբողջ քառասուն տարի (սկսած հրատարակման օրից) առանց ընդմիջումի ստանալով «Մշակը», ես զգացել եմ նրա մեծութիւնը և այժմ իմ սեպուհ պարտականութիւնս եմ համարում ուղարկել կազմվելիք ֆոնդի համար, համեմատ իմ ույժերի, 5 ր., խոստանալով նոյնը շարունակել այնքան ժամանակ, մինչև որ լրագրի գոյութիւնը Յոբելեանական Յանձնաժողովի կողմից նիւթականապէս ապահովված կը համարվի։

Գարեգին քահ. Թումանեանց
Գանձակ, 16 ապրիլի

Յ. Գ.— Նամակս պօստին յանձնելու ժամանակ սրտի անհուն ուրախութեամբ կարդացի «Մշակի» № 77-ում, որ մեծ. պ. Դաւիթ-խան Բօղդանին Ստան-Իւզբաշեանը «Մշակի» յոբելեանի առիթով նուիրել է հինգ հազար (5000) րուբլի։ Պատիւ պարոնին. քաջ համոզված եմ, որ յարգելի պարոնի օրինակին իրանց խոշոր նուէրներով կը հետևեն հարիւր հազարներ ունեցող մեր հարուստները, եթէ իրաւ նրանց սրտին մօտ է «Մշակի» ընդ միշտ գոյութիւնը։

Նոյն

Ծան. խմբ.— Գ. ք. Թումանեանի ուղարկած յիշեալ 5 րուբլին յանձնեցինք «Մշակի» Յոբելեանական Յանձնաժողովին։

«ՄՇԱԿԻ» ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, 1 ապրիլի

«Մշակի» 40-ամեակի տօնախմբութեան Յոբելեանական Յանձնաժողովը սրանով պատիւ ունի իր խորին շնորհակալութիւնը յայտնել մեծ. պ. Տիգրան Աֆրիկեանին, որ «Մշակի» յոբելեանի առիթով նուիրեց հինգ հարիւր (500) րուբլի։

Փոխ-նախագահներ Յանձնաժողովի՝
Յովհ. Սպէնդիարեան
Բժշկ. Բ. Նաւասարդեան
Արշակ Մըլեան
Քարտուղար՝ Ստ. Մալխասեանց

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Մշակի» յոբելեանի առիթով Հայոց Ազգագրական Ընկերութեան դահլիճում հաւաքված հայ կանայքն ամենայն հետաքրքրութեամբ դիտեցին թանգարանի իրերը, լսելով միանգամայն Ե. Լալայեանի տուած բացատրութիւնները։

Հայ կանայք, որ միշտ հանդիսացել են հայկական ինքնուրոյնութեան, ազգային հնութիւնների պահպանութեան նախանձախնդիրը, մեծ համակրութեամբ վերաբերվեցին դէպի ազգային թանգարան-մատենադարան ունենալու գաղափարը և խոստացան ամեն կերպ նպաստել։ Մինչև անգամ նրանցից մի քանիսը անմիջապէս խոստացան նուիրաբերել հանդերձներ և իրեր. այսպէս՝ տ. Սիլիկեան խոստացաւ նուիրել նուխեցի հայ կնոջ բոլոր հանդերձներն ու գլխի զարդարանքը, տ. Բոյենդուրեան խոստացաւ տալ թիֆլիսեցի հայ տղամարդու և կնոջ բոլոր զգեստները, տ. Ե. Յարութիւնեան՝ ախալքալաքցու հայ կնոջ հանդերձը, տ. Նոնեփարեան թիֆլիսեցի հայ տղամարդու մի ձեռք հագուստ և նոյն իսկ մանկկնի ծախսը։

Հայոց Ազգագրական Ընկերութիւնը յոյս է տածում, որ շնորհիւ այս համակրանքի, շատ շուտով կը կարողանայ թանգարանը իր կոչման բարձրութեան վրա դնել և չը կարմրել, երբ այցելուները առարկում են, թէ վրաց նոյնանման թանգարանում, որ մերից աւելի ուշ է բացված, աւելի շատ իրեր կան. միթէ հայ կինը այս կէտում տեղի պիտի տայ վրացուհուն, որ մրջյունի մեղուի պէս հաւաքում է անցեալի հատ ու կտոր յիշատակարանները՝ ազգային ինքնուրոյնութիւնը վերականգնելու. միթէ դժուար է հայուհուն ամեն անգամ, երբ իր սնդուկներն ու պահարանները բաց է անում, հանել այնտեղից իր սկեսրոջ կամ տատի հին շորերը, հին ասեղնագործ կըտորներ, գործածութիւնից արդէն դուրս եկած զարդեր, իրեր և ուղարկել Հայոց Ազգագրական Ընկերութեանը՝ ընդ միշտ պահել պահպանելու. չէ որ դրանք բոլորն էլ կարճ միջոցից ցեցոտվելու, կոտրտվելու, ոչնչանալու են, ինչպիսի վիճակի ենթարկվել են արդէն շատ և շատ թանգագին իրեր և հանդերձներ։ Ե. Լ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Յովհաննէս Յովհաննիսեանը ռուսահայ բանաստեղծութեան ռահվիրաներից մէկն է, որ իր զգացումների և իդէալների սկզբնական թափով բոլորի ուշադրութիւնը իր վրա հրաւիրեց։

Այս փոքրիկ վերլուծական փորձով պիտի ջանամ պարզել, թէ ինչու, իր անուրանալի բարձր ձիրքով և էսթետիքական աւիւնով հանդերձ, նա չը կարողացաւ գոհացնել ընթերցող հասարակութեան։

Կրկնված բայց անհերքելի ճշմարտութիւն է, թէ գրական խոշոր տաղանդներ և գրական անմահներ դառնում են այն անձնաւորութիւնները, որոնք իրանց բնատուր ընդունակութեամբ կարողանում են որսալ ժամանակի հասարակական կեանքի մօմենտը, կարողանում են հասարակութեանը տիրող տրամադրութեան արտայայտիչը լինել, թելքվել և ընդունել այն յարմարաւոր դրութիւնն ու դիրքը, որ ուղիղ գծերով կեանքի բազմազան ճառագայթները գան միանան նրա հոգում և կազմեն հասարակութեան հոգեբանութեան հնոցը։ Իւրաքանչիւր բանաստեղծ իր միջավայրի պըտուղն է, որքան էլ որ նա ինքնատիպ ու անկախ երեւայ. բայց իւրաքանչիւր բանաստեղծ չէ կարող հաւասար ընդունակութեամբ և զգացումների հարազատութեամբ ըմբռնել ժամանակի ոգին և հաւասար տաղանդով արտայայտել. ուստի բազմաթիւ նոյնացեղ գրական մարդկանց, բանաստեղծների, վիպասանների համաստեղութեան մէջ էն փայլունը, էն տաղանդաւորը դառնում է ժամանակի գրական տիտանն ու անմահը։

Այժմ տեսնենք, թէ Յ. Յովհաննիսեանը իր ժամանակի հայ կեանքի հարազատ արտայայտիչն եղա՞ւ թէ ոչ։ Յովհաննիսեանի նկատմամբ այս կէտը վճռական նշանակութիւն ունի և մեր կարծիքով այս հարցի բացասական պատասխանն է, որ նա իր բանաստեղծական բարձր տաղանդի համապատասխան ու վայել, աւելի ճիշդը՝ առաջին տեղը չը գրաւեց ռուսահայ բանաստեղծների աղքատիկ և համեստ խմբակի մէջ։

Ռուսահայոց վերազարթման շրջանն էր։ Ռուսահայ երիտասարդութիւնը ուսանելով Ռուսաստանի սրտում՝ Մոսկվայում, կըրթվելով ռուս կեանքի լայն ալեկոծման և ազատական պայքարի անմիջական ազդեցութեան տակ՝ լցվում էր արեւմտականութեան քաղաքակրթութեան անսպառ տենչով. դառնում էին հայրենիք, մտնում ժողովրդի մէջ, ալեկոծում նախկին լճացած, ճահճացած կեանքը, կռիւ յայտարարում հայ ժողովրդի յետադէմ տարրին, հայ խոշոր կալուածատէրերի և հոգեւորական դասի դէմ։ Նոր զարթնող բուրժուազիայի և տիրող կալուածատէր դասի ճակատագրական պայքարն էր այդ իսկութեամբ։ Կռիւ հին հայեացքների, հին կարգերի և հնի պաշտպան սնանկացած հոգեւորական դասի դէմ. պայքար յանուն արեւմտեան քաղաքակրթութեան, յանուն ժողովրդականութեան և յանուն թիւրքահայոց ազատագրման։ Ազատ, անկախ, սեփակա՛ն Հայաստան, աւելի դիւթիչ, աւելի գրաւիչ ի՞նչ երազ կարող էր լինել հայ բուրժուազիայի համար։ Ահա հայ բուրժուազիայի, ինչպէս և բնական է, հայ մտաւորական և ազատախոհ տարրի ամբողջ հոգին, սիրտն ու երեւակայութիւնը յափշտակվում է այդ իղձերով. խօսում, գրում են, երգում ու գործում են յանուն այդ սրբազան գաղափարի։ Թիւրքահայ ազատագրումը ռուսահայ կեանքի առանցքն է դառնում։ Պայքարի ու գրոհի շրջանն էր այդ. այդ էին քարոզում Աբովեանները, Պատկանեանները, Նալբանդեանները, Նազարեաններն ու Արծրունիները։ Դրանք բոլորն էլ «sturm»-ի, «գրոհի ու փոթորկի» բանաստեղծներ են։

Յ. Յովհաննիսեանն էլ այդ պայքարի ոգով տոգորված մթնոլորտի զաւակն է, այդ գործիչների աշակերտը. և միայն այդ տրամադրութեան երգիչը դառնալով կարող էր խոշոր ազդեցութիւն ունենալ կեանքի ու երիտասարդ սերնդի վրա. միայն պայքարի, քաղաքակրթութեան երգիչը կարող էր յուսալ գնահատման և արդիւնաւէտ ազդեցութեան։ Բայց նա իր առաջնակարգ ընդունակութեամբ և ռուսահայ բանաստեղծներից ամենից աւելի բարձր էսթետիքական աւիւնով չը հանդիսացաւ այդ ոգու արտայայտիչը. թէպէտ և իր սկզբնական քայլերում խոստացաւ ծառայել «գրոհին ու փոթորկին», բայց շուտով հրաժարվեց այդ կոչումից։ Ահա թէ ինչ խօսքերով կրկէս ելաւ, բայց շուտով ինչեր ասաց։ Նա դիմում է աշուղին այսպէս.

Տեսնում եմ որ մենք թմրած ենք, քունն անուշ
 է մեզ թւում,
Էր ես դու էլ մեզ բոլորիս մաշող քնիցն յաղթվում։
Ա՛ռ չունգուրդ, տո՛ւր լարերին, կրակ վառիր մեր
 սրտում,
Մեզ ամենիս շունչ տուող մի բան ասա սրտալի։

Այս տողերի մէջ վերազարթումի ու պայքարի նախերգանքն է հնչում. բայց թերթեցէք երեսը. ահա ձեզ անակնկալը. ահա նախկին խոստման դրժումը. անկում կամքի և սեռուն նպատակի փոխարէն տարտամութիւն, տարուբերում, կեանքի անորոշութիւն, շփոթութիւն և ունայնութեան խոհեր։

Ով իմ խեղճուկ կեանք, խառնուրդ սոսկալի,
Մանուկ հաւատոյ, չար երկբայութեան,
Անուշ պատրանաց, խաբմանց վշտալի
Եւ յատակ սիրոյ, և ատելութեան
Խաղալիք ես դու նենգաւոր բաղդի։

Մի քանի տող յետոյ.

Հոգիս լի ցաւով՝ նայում եմ միայն,
Թէ ուր են թռչում սրընթաց ալիք,
Եւ գէթ պիտի տան ինձ մի պատասխան
Սըլացող կեանքիս կոհակներ գալիք։

Ո՞ւր մնացին «կրակն» ու բոցը, գաղափարական գործունէութիւնը։ Այստեղ բացարձակապէս բացակայում է կամական տարրը, ակտիվ գործունէութեան ազդակները։

Այժմ երբ Յովհաննիսեանի հոգեկան աշխարհի մէջ կատարված այս վաղահաս յեղաշրջումը պարզօրէն մատնանշեցինք, աշխատենք բացատրել այդ երևոյթը։

Ուսանելով Մոսկվայում, նա և բնականօրէն պիտի ենթարկվէր ռուսական կեանքի և գրականութեան զօրեղ ազդեցութեանը։ Ռուսական գրականութեան մէջ արդէն գոյութիւն ունէր յոռետես տրամադրութիւն, որ շատ հասկանալի ու բնական էր, եթէ նըկատի առնենք Ալէքսանդր II-ի թագաւորութեան երկրորդ շրջանի յետադարձ, ռէակցիոներ յեղաշրջումը։ Ռուս երիտասարդութեան շատ փայլուն երազները խորտակվեցին, և նախկին խանդավառութեան փոխարէն լքումն ու յուսահատութիւնը տիրեց։ Ռուսաստանի լայնատարած դաշտերի վրա փչում էր մետերնիխեան խաւարչոտ ոգին։ Ռուս ժողովրդի յատուկ մեղկ ու անձեռներէց բնաւորութեան պատճառով այս անաջողութիւնները չափազանց մեծ ազդեցութիւն ունեցան և հող պատրաստեցին բայրոնիստական տրամադրութեան, և ռուս գրականութեան մէջ առաջացան Евгеній Онѣгинъ-ներ ու Печоринъ-ներ։

Ռուս խոշոր կալուածատէրերի զգայուն ներկայացուցիչներն էլ համակվեցին բացարձակապէս ռուս կեանքին ինքնայատուկ մի վսեմ վշտով։ Ռուս կալուածատէր ու ազնուական դասը ապրում էին ճոխութեան մէջ ի հաշիւ հարիւրաւոր, հազարաւոր ճորտերի տաժանելի աշխատանքներին, դառն, քրտնաթոր կեանքին, վարելով անգործ, դատարկ և ապահով կեանք։ Նրանք կորցրել էին իրանց կամքն ու էներգիան ընկղմած քնէածութեան և նիրվանական անդորրութեան մէջ։ Այս դասի սակաւաթիւ ու զգայուն, ազնիւ հոգիները զգացին վերջապէս իրանց հասարակական դիրքի ու առանձնաշնորհումների սոսկալի անիրաւութիւնը, ճորտական կարգերի անասելի անարդարութիւնը։ Նրանք հասկացան, որ իրանց միսն ու արիւնն ուրիշների արևակէզ, ցամաք հացով սնված դէմքերի աղի քրտինքի խտացումն է, որ իրանց գիտութիւնն ու զարգացումը ձեռք է բերված իրանց պէս մարդկանց կեանքի գնով։ Ըմբռնեցին այս անարդարութիւնը, և նրանց հոգին լցվեց մի խորը լայն տխրութեամբ։ Իսկ նրանց սիրտը քաւութեան այրող տանջանքով բռնկվեց։ Ահա այդ անձնաւորութիւնները ստեղծեցին վսեմ, աւետարանական, հանուր սիրոյ և համամարդկային խաղաղութեան մի գրականութիւն ու փիլիսոփայութիւն։

Թէ բայրընիզմը և թէ այս քաւող ազնուականութեան փիլիսոփայական խոհերը ինչքան որ հասկանալի էին ռուս կեանքում, նոյնքան անհասկանալի ու անբնական էին ռուսահայ կեանքի մէջ, ուստի չէին կարող իրանց բնական ու նպաստաւոր հողը գտնել և չը գտան էլ. միայն բայրընիզմի լոկ արտաքին ձևերն ու ոճերը իւրացվեցին Շահազիզի «Լևոնի վիշտը» պօէմայում։

Այս երկու խոշոր տրամադրութիւնները անհամապատասխան լինելով վերազարթման, նոր կեանքին դիմող ռուսահայոց իրանց ոգով տոգորված երկերը չէին կարող դեր խաղալ։ Եթէ Շահազիզի «Լևոնի վիշտը» որոշ ազդեցութիւն ունեցել է ռուսահայ երիտասարդութեան վրա, այդ բացատրվում է լոկ այն պարագայով, որ նրա լոկ արտաքին ձևերն են բայրոնիստական, իսկ ներքին էութեամբ լիապէս համապատասխանում է իրականութեան. նա ևս վերազարթման, քաղաքակրթութեան քարոզ է։

Յ. Յովհաննիսեանը մեծապէս ենթարկված է վերոյիշեալ տրամադրութիւնների ազդեցութեան և շատ աւելի զօրեղ, քան Շահազիզը։ Գուցէ այդ կարելի է բացատրել թիւրքահայոց անմխիթար վիճակով և կողմնակիօրէն նաև այն պարագայով, որ նա, եթէ չենք սխալվում, աշակերտած է Շահազիզին։

Մեր կարծիքով ահա այդ պարագան վճռական նշանակութիւն է ունեցած և ամենագլխաւոր պատճառն է, որ նա իր վայել ու արժանի տեղը չէ գրաւած ռուսահայ բանաստեղծների խմբակի մէջ։ Տեսնում ենք, որ նա կռւի ու վերազարթման շրջանում քարոզում է համամարդկային սիրոյ, խաղաղութեան, բարեկամութեան, կարեկցութեան, աւետարանական իղձեր. տարվելով ռուսսոյական ու տոլստոյական բըմանուկժամով, պախարակում է ու վնասակար համարում գիտութիւնը։

Գիտութիւն ինչպէս մի թոյն դանդաղկոտ
Աննկատելի վարակեց հոգիս,
Ինչպէս ցուրտ ձմեռ միտքս կասկածոտ
Քաղեց խորտակեց ծաղիկը կեանքիս։

Այս տեսակ տողեր, որքան էլ նրանք գեղեցիկ ու ախորժալուր լինեն, տրամագծօրէն անհամապատասխան լինելով ժամանակի հասարակութեան հիմնական տրամադրութեան՝ չէին կարող ոգեւորել, ազդել, յուզել երիտասարդութեան, չէին կարող այդ զգացումները կեանքի կոչվել։ Հէնց ինքը՝ բանաստեղծը եւ չէր կարող ամբողջ էութեամբ, սրտի ամեն մի զարկով, հոգու իւրաքանչիւր հիւլէով զգալ, յուզվել իր երգած իդէալներով. նա էլ իր միջավայրի զաւակն է։ Բայց իր գեղարուեստական տաղանդի ու քարոզած գաղափարների յաւիտենական վսեմութեան ու զգացումների սիրուն արտայայտութեան շնորհիւ նրա երգերը կարդացվում են սիրով ու մեղմիկ բաւականութեամբ։ Վաղահաս մոռացումից և անյետ կորստից փրկված են։

Յ. Յովհաննիսեանը մեր համակրելի երգիչն է, սիրոյ, բարեկամութեան, կարեկցութեան, խաղաղութեան բանաստեղծը։

Թաւիշ հոգի, կաթնաղբիւր սիրտ, մեղրածոր շուրթն ու անջիղ մարմին։

Սրտագին բարեմաղթութիւններս իմ սիրելի ուսուցչին։ Ե. Ամատունի

Բաթում

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Մեզ ուղարկված է հետեւեալ նկատողութիւնը։

«Հորիզոնի» № 77-ում Շիրվանզադէն իրաւացի կերպով բողոքում է այն երեւոյթի դէմ, որ այդ թերթում ոմն Վ. Մենակ «Գեղարուեստի» մասին գրած գրախօսականի մէջ Արամ Զարբզի մի տգեղ ոտանաւորը շատ սիրուն բանաստեղծութիւն է համարել։

«Ես բողոքում եմ խորին զզուանքով այդ տեսակ կեղտոտ «բանաստեղծութեան» դէմ,—ասում է Շիրվանզադէն.—ցաւում եմ միեւնոյն ժամանակ, որ «Հորիզոնը» թոյլ է տուել իր էջերում «սիրուն բանաստեղծութիւն» անուանելու այն, ինչ որ գռեհիկ ճաշակի և կեղտոտ զգացմունքների արգիւնք է»։ Ի զուր է սակայն ցաւ յայտնում Շիրվանզադէն «Հորիզոնին»։ Այդ թերթի համփաները այնքան են սիրահարված իրանց թայֆային պատկանող «բանաստեղծների» վրա, որ ոչ միայն կուրանում են նկատել նման գոհարների այլանդակութիւնը, այլ և զանազան Մենակների միջոցով րեկլամներ շռայլում իրանց օջախի մարդկանց հասցէին, սրանց «բանաստեղծական հմայքը» ժողովրդականացնելու միամիտների աչքում։ Եւ ոչ միայն այդ. «Հորիզոնի» գրասենեակում նստածները, ինչպէս երեւում է, երդված են ոչ մի ձանք չը խնայել հակառակ հոսանքի և գրական ուղղութեան պատկանող բանաստեղծներին հալածել միշտ մի անբարեխիղճ կարծիք յայտնելով նրանց մասին, այն էլ ընդհանուր խօսքերով, առանց հիմնաւորելու ասածը (Ա. Ծատուրեան, Յ. Յակոբեան և այլն)։

Ի հարկէ «էստէտ» Մենակները միշտ էլ մենակ կը մնան իրանց այլանդակ փնտռտուքների մէջ, իսկ Շիրվանզադէն որքան էլ ցաւ յայտնի «Հորիզոնին», իր «գեղարուեստագէտ» կօլլեգաները խրատվողը չեն։

Չէ որ խնդիրը վերաբերում է գրքերի մէջ ամուր մնալուն և օջախի մարդկանց համար րեկլամներով անուն ստեղծելուն, ինչ գնով էլ լինի այդ։

Մեզ մնում է միայն ասել. շարեցէք, շարեցէք թղթէ պալատներ ժողովրդի գրական գիտակցութիւնը և ճաշակը մթագնացնելու համար, մինչեւ նրան արտաքին ձեւերի տակ շպարված այնպիսի «գեղարուեստական» կտորներով, ինչպէս օրինակ ձեր հաւանած հեղինակների «Նանի, նանի, իմ պուպուշ» (Ար. Տիգրանեան), «Աշխարհը յաւիտեան մահվան բերանում և մահը նրան ծամում է, ծամում» (Աւ. Իսահակեան) կամ Դ. Դէմիրճեանի «Մեռելի ու թաղումի երգերով» հալածեցէք «լուսաբացի» և աշխատանքի խրոխտ երգերը անբարեխղճութեամբ. մի օր երևի Նեմեզիդան կը գայ ձեր դատաստանին, և ձեզ այլ եւս չի փրկի ոչ «անապատ» և ոչ էջմիածին փախչելը։ Ք.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նովորոսիյսկ, 10 ապրիլի

Իտալական նաւատորմը ռմբակոծելով Դարդանէլը մեծ ազդեցութիւն ունեցաւ Նովորոսիյսկի նաւահանգստի վրա։ Առաջին լուրերը տեղս հասնելուն պէս, ամսիս 6-ի երեկոյեան հացահատիկների գները յանկարծ իջան՝ հաճարը 20 կ., եգիպտացորենը 15 կ., ցորենը 30 կ., յետոյ էկսպորտ գրասենեակները հեռագիրներ ստացան, որ ոչ մէկ պուդ հացահատիկ չառնեն։ Նովորոսիյսկի նաւահանգստում ներկայումս կանգնած են 6 նաւեր՝ յունական, հօլլանդական և անգլիական։ Դարդանէլի փակման պատճառով նաւերին հրամայված է, որ տեղերից չը շարժվեն, այլ մնան նաւահանգստում. օրական ամեն մի նաւ վնաս է քաշում մօտաւորապէս 200—300 րուբ.։ Արտահանութեան համար դեռ տեղիս նաւահանգստում կայ $4\frac{1}{2}$ միլիոն պուդ հաց, բայց համեմատելով անցեալ տարվայ այս ժամանակվայ հետ՝ քիչ է, որովհետև անցեալ տարի այս ժամանակ դեռ կար արտահանութեան համար 15—20 միլիոն պուդ։ Հացի շուկայի տրամադրութիւնը ճնշված է։

Հմայեակ Մակարեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 13 ապրիլի

Արտաքին գործերի մինիստրի ճառից յետոյ խօսում է նախահաշւի տեղեկաբեր Կրուպէնսկին և մատնանշում է, որ մինիստրի հանդէս գալը արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ բացատրութիւններ տալով հանդիսանում է Գերագոյն Իշխանութեան վստահութեան գրաւական առ ժողովրդական ներկայացուցչութիւնը։ «Մենք ներկայ ենք,—վերջացնում է հռետորը,—մի նախօրեակի, երբ վերանում են երկարատև զինված խաղաղութիւնից ստեղծված յարաբերութիւնները։ Ինչ տեսակ էլ որ լինի վախճանը, Ռուսաստանը չը պէտք է խաղայ պասիվ դեր, որովհետև առաջխաղաց շարժման ժամանակ յետ մնացողը համարվում է պարտված»։ (ծափահարութիւն կենտրոնում և նացիոնալիստների կողմից)։

Միլիւկովը ողջունում է մինիստրին, որ հնարաւոր գտաւ վերականգնել իր նախորդի բարի սովորութիւնը հանդէս գալով Դումայի առաջ. նա համաձայնվում է, որ մեր դրութիւնը ներկայ բոպէին ներկայանում է առանձնապէս դժուարին Մերձաւոր, Միջին և Հեռաւոր Արևելքում։ Ամենուրեք յարուցված են լուրջ ու կենսական հարցեր, որոնց Ռուսաստանը չէ կարող ուշադրութիւն չը դարձնել։ Քողարկված անտագօնիզմը Անգլիայի և Գերմանիայի միջև՝ ահա այն առանցքը, որի շուրջը պտտվում է համաշխարհային քաղաքականութիւնը։ Այդ անտագօնիզմը մտել է նոր փազիսի մէջ, երբ Գերմանիան ստիպված եղաւ չափաւորել իր ոտնձգութիւնները Անգլիայի անմիջական միջամտութեան ազդեցութեան տակ։ Այդ միջամտութիւնը բաւական եղաւ եւրոպական խաղաղութիւնը պահելու համար։ Անհագին նշանակութիւն ստացաւ եռապետեան համաձայնութիւնը, որի անդամներից մինը Ռուսաստանն է։ Խաղաղութեան պահպանութիւնը մեծ պետութիւնների միջև արգելք չեղաւ, սակայն, բացարձակ միջադէպերի առաջանալուն երկրորդական պետութիւնների միջև։ Մի տարի առաջ, ինչպէս յիշում է հռետորը, նա երկիւղ յայտնեց այն ժամանակ պտտվող այն լուրերի առիթով, թէ ռուսական արտաքին գործերի մինիստրութեան մէջ սկսվում է ուժեղ մարդկանց դարաշրջան, որպիսին կը ներկայանար նացիոնալիզմի դարագլուխ մեր դիպլոմատիայի մէջ։ Բարեբախտաբար մինիստրը չարդարացրեց այդ համբաւը, սակայն դժբախտաբար հիւանդութեան պատճառով նա չը կարողացաւ ոչ մի հռչակ ստեղծել իր համար։ Մինիստրութեան քայքայման ժամանակ երևաց, որ մինիստրութեան ամեն մի յարկի երկրորդական գործիչ իր քաղաքականութիւնն ունի։ Միայն մինիստրի վերադառնալուց յետոյ հնարաւոր դարձաւ նկատել մինիստրութեան կառավարութեան ընդհանուր բնաւորութիւն, որ բնորոշ է նրանով, թէ արտաքին քաղաքականութիւնը ղեկավարողը գիտակցում է իր պատասխանատուութիւնը երկրի առաջ՝ հակակշիռ անպատասխանատու դիպլոմատիայի։

Այս ընդհանուր նկատողութիւնից յետոյ իր ճառի առաջին մասը հռետորը նուիրում է պարզելու Բալկանում տիրող դրութիւնը և յանգում է այն եզրակացութեան, թէ այն դէպքում, երբ որոշ ձգտում կայ բալկանեան քաղաքականութիւնը շրջել բալկանեան ֆեդերացիա—Թիւրքիայի գլխաւորութեամբ—ստեղծելու կողմը, բալկանեան հարցը կարելի է լուծել այնպէս, որ դա չը լինի յօգուտ առանձին պետութեան և ամենից առաջ ոչ յօգուտ Աւստրիայի (ծափ. ձախից)։

Միլիւկովը իր ճառը շարունակում է երեկոյեան նիստում $1\frac{1}{2}$ ժամ շարունակ. նրա ճառի ամենագլխաւոր կէտերը հետեւեալներն են։

Փաստացի վաւերագրերը թոյլ են տալիս կարծել, որ մեր յարաբերութիւնները Աւստրիայի հետ գտնվում են բարելաւման շրջանում, բայց բոլորովին բաց է այն հարցը, թէ ինչ փոխադարձ պայմանաւորեալ հիմունքներով Ռուսաստանը և Աւստրիան կարող են վարել ընդհանուր քաղաքականութիւն Բալկանում։ Մինիստրի այն յայտարարութիւնը, թէ մեր և Իտալիայի հայեացքները նոյնն են բալկանեան գործերի վերաբերմամբ, հանգստութիւն է տալիս, ենթարկելով մեզ այն դժուարութիւնները ունենալու ռիսկին, որոնք ներկայումս բաժին են ընկել Իտալիային։ Ռուսաց կառավարութեան փորձը—առաջարկել միջնորդի դեր—առաջ է բերում լիակատար համակրանք, սակայն մինիստրի լաւատեսութիւնը միջնորդութեան հետեւանքների նկատմամբ փոքր ինչ չափազանցված է։ Մեր քաղաքականութեան տրադիցիաներին մենք դաւաճանած կը լինենք, եթէ անգամ մի քայլ թոյլ տանք նահանջելու այն կացութեան մէջ, որ ձեռք է բերել Կրետէի քրիստոնեայ ազգաբնակութիւնը, որ Յունաստանի հետ միանալն իր բաղձը վստահել է մեծ պետութիւններին։ Չը նայած Բուլղարիայի և Սերբիայի ինքնագլխման, չէ կարելի ասել, թէ յուզալի լուրերը վստահութեան արժանի չեն և մօտիկ ապագայում արտաքին խաղաղութիւնը չի խախտվի. ընդհակառակն, հնարաւոր են անակնկալ հանգամանքներ, չը նախատեսված անսպասելի, յաճախ պատահական դէպքերի ընթացքի վրա վճռական նշանակութիւն ունեցող պատահարներ։ Բալկանեան պետութիւնների տրամադրութիւնը ներկայ պայմաններում մօտենում է օրհասական կերպով ոչ թէ իրականացնելու բալկանեան ֆեդերացիայի գաղափարը, այլ ըստ հնարաւորութեան բաժանելու հիւանդ մարդու ժառանգութիւնը։ Մեր քաղաքականութեան անաջողութիւնից յետոյ Բոսնիայի և Հերցեգովինայի վերաբերութեամբ՝ բալկանեան պետութիւնները իրանց հայեացքը դարձրին դէպի Վիեննա... Այստեղ ռէալ հող է պատրաստվում խնդրի լուծման համար, հակառակ Ռուսաստանի որոշածի։ Հռետորի կարծիքով՝ մեր յարաբերութիւնները Աւստրօ-Ունգարիայի հետ չեն պայմանավորվում մինիստրի ասածներով, այլ գոյութիւն ունեն կրկին առանց լուրջ, անպատասխանատու դիպլոմատիայից բղխող յարաբերութիւններ։ Սակայն ապագայ որսաբաժանման մէջ Ռուսաստանը կարող է յուսալ սոսկ լուծել տալու նեղուցների և Դարդանէլի հարցը։ Բայց այս հարցում ես մենք ինքներս, դնելով նեղուցների բացման ու փակման հարցը միջազգային իրաւունքի հողի վրա, մեզ զրկեցինք հիւանդ մարդու ժառանգութեան բաժանման մէջ որևէ շահ ստանալու հնարաւորութիւնից։ Այստեղից այն է հետեւում, որ Ռուսաստանը պէտք է պաշտպանէ գոյութիւն ունեցող դրութիւնը, թոյլ չը տայ բարձրացնել այնպիսի հարցեր, որոնք կարող են մեզ համար վտանգաւոր լինել, պահպանէ թիւրքական շրջանների ամբողջութիւնը, մինչև որ այնպիսի կօմբինացիա կը կազմվի, երբ այդ շրջանները կարող են աւտօնօմ դառնալ. այն ժամանակ կը բացվի ճանապարհ բալկանեան ֆեդերացիայի առ այժմ միամիտ պլատօնական գաղափարի իրականացման համար, ֆեդերացիայի, որից Աւստրիան և Ռուսաստանը չեն ստանայ անմիջական օգուտ, բայց կը ստեղծվի չէզոք հաւասարակշռութիւն, որ չի աւելացնի ոչ ոքի ոյժերը։ Միջին Արևելեան հարցում հռետորը ցաւում է, որ մինիստրը չասաց, թէ Թիւրքիան աջակցութիւն չի ստանայ Ուրմիայում և Ատրպատականում, բացասական երևոյթ է համարում առանց այն էլ մեզ անշահաւէտ պօտսդամեան համաձայնութեանն արած լրացուցիչ զիջումները, միանգամայն բացասաբար է վերաբերվում Պարսկաստան ռուսական պատժիչ զօրամասեր ուղարկելուն, աշխատում է ապացուցել արտասահմանեան լրագրական տեղեկութիւնների հիման վրա թէ ռուսական դիպլոմատիան, հակառակ մինիստրի յայտարարութեան, համարեա բացարձակօրէն օգնում էր էկս-շահին և իր դէմ գրգռեց իր քաղաքականութեամբ ոչ միայն ռուսահպատակներին, այլ և դաշնակից անգլիացիներին, մինչ դեռ ամբողջ պարսկական հարցը պահանջում էր մեզանից սոսկ վերահսկումն ու ազդեցութիւն ֆինանսների վրա, ինչպէս նաև կազմակերպել պարսկական փոքրաթիւ զօրք՝ ներքին ոստիկանական կարգ ու կանոնի պահպանութեան համար։ Այս տեսակ լուծման համար չէին պահանջվում պատժիչ զօրամասեր և անպատասխանատու դիպլոմատիայի միջամտութիւնը։ Պարսկական հարցի նկատմամբ հռետորը անհրաժեշտ է գտնում անջատել ռուսական գործողութիւնները Ուրմիայում, որովհետև այստեղ անկասած են մեր ազգային շահերը, ուստի մինիստրութիւնը հանդիպում է այստեղ լիակատար աջակցութեան ու համակրանքի։ Հեռաւոր Արևելքի հարցում հռետորը ողջունում է մինիստրութեան, որ չենթարկվեց աջակողմեան մամուլի սպառնալիքներին և գրաւելու պահանջներին և մի քանի ծանօթութիւններ անելով միանում է մինիստրի կարծիքին։ Հռետորը նախազգուշացնում է, որ Խալխայի ներկայ դրութեան մէջ նրան առաջարկվող աջակցութիւնը պէտք է այնպէս ուժեղ լինի, որպէս զի չը տարբերվի հովանաւորութիւնից, և երկիւղ է կրում անպատասխանատու դիպլոմատիայի միջամտութիւնից, որ կարող է հարց յարուցանել Հեռաւոր Արևելքի հիւանդ մարդու աւելի մեծ ժառանգութեան բաժանման մասին։ Հռետորը կասկածով է վերաբերվում Ռուսաստանի և Ճապոնիայի շատ գործողութիւններին Մանջուրիայում, որովհետև նպատակների միանմանութեան դէմ տարբեր են ուժերը. Ճապոնիան իր նպատակին կը հասնէ աւելի արագ։ Ռուս-ամերիկական պայմանագրի խզումը հռետորը համարում է ոչ թէ հրէական ագիտացիայի հետևանք, այլ ընդհանուր-ամերիկական կարծիքի, և յայտնում է, թէ համաձայն չէ ձևի հետ, բայց համերաշխ է այդ ակտի բովանդակութեանը, որովհետև երբ նոյն իսկ Սիամն էլ սկսում է ճանաչել համաշխարհային կուլտուրայի հիմունքները, չէ կարելի մնալ իբրև մարդկային ցեղի արատ, այլասերումն... (ուժեղ աղմուկ աջից)։ Վերջում հռետորը գտնում է, որ ցաւալի է վիճակը մի երկրի, ուր անպատասխանատու դիպլոմատների քմահաճոյքները հանդիպում են մինիստրութեան խրախուսանքին և գտնում են խոչընդոտներ ոչ թէ ազգային շահերի և ժողովրդական կամքի մէջ, այլ միջազգային դիպլոմատական ձևերի ու տեխնիքական անկատարման մէջ (ծափահարութիւն ձախից և կենտրոնում)։

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի նահանգապետ Ա. Չերնեավսկու հիւանդութեան պատճառով Թիֆլիսի նահանգի ժամանակաւոր կառավարութիւնը յանձնված է փոխ-նահանգապետ Ե. Պանովին։

◆ Թիֆլիս է ժամանել Գանձակի նահանգապետ Գ. Կօվալեօվը։

◆ «Լօնդօն» հիւրանոցում, ամսիս 17-ին, սրտի պայթիւնից յանկարծամահ եղաւ Նորին Կայսերական Մեծութեան Երևանեան զօրագնդի հրամանատար գնդապետ Մ. Շլիտտէրը։

◆ Ապրիլի 20-ին, «Սպիտակ ծաղկի» տօնի օրը, ծաղիկ վաճառողներին ձրիաբար երթեւեկելու իրաւունք տալու համար տրամվայի քաղ. մասնաժողովը, յանձին իրաւասու Մ. Վսեւոլովզորովի, խնդրում էր Թիֆլիսի տրամվայի վարչութիւնից յարգել մասնաժողովի միջնորդութիւնը։ Սակայն տրամվայի վարչութիւնը յայտնել է տրամվայի վրա հսկող մասնաժողովին, որ ինքը իրաւունք չունի ինքնակամ կերպով այդօրինակ իրաւունքներ տալ և այդ նպատակով հեռագրով պիտի բանակցէ նախ և առաջ Բրիւսէլի վարչութեան հետ։

◆ Այսօր, ցերեկվայ $1\frac{1}{2}$ ժամին Ա. Մանթաշեանի անուան վաճառականական դպրոցում կը կատարվի հոգեհանգստեան կարգ հանգուցեալ բարերար Ա. Յ. Մանթաշեանի մահվան տարելիցի առիթով։

◆ Մեզ հաղորդում են, որ ապագայ «Ժամհարեան Գիւղատնտեսական դպրոցի» հիմնումը Գանձակում, այդտեղի ս. Յովհաննէս եկեղեցու գետնի վրա, նոր խոչընդոտների է հանդիպում. Թեմական իշխանութիւնը նոր պահանջներ է յայտնում։ Այդ պատճառով, դիտաւորութիւն կայ մի այլ տեղ որոնել։

◆ Երևանի քաղաքային ձայնաւորների մի խումբ դիմել է Ժամհարեան գիւղատնտեսական դպրոցի յանձնաժողովի նախագահ Ա. Բալանթարին մի առաջարկութեամբ՝ հաստատելու դպրոցը Երևանում։ Ձայնաւորները հնարաւոր են համարում յատկացնել քաղաքային հողերից մինչև 100 դեսեատին ջրովի հող դպրոցի նպատակների համար։ Այդ առաջարկութեան մասին կը հաղորդվի Ժամհարեան եղբայրներին։

◆ Յովնանեան-Մարիամեան օրիորդական դպրոցում 7-րդ դասարանի աւարտական քննութիւնները սկսվեցին ամսիս 17-ին։ Ներսիսեան դպրոցում քննական ստուգութիւնները սկսվելու են ամսիս 20-ից։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 5-ին, Թիֆլիսի Հայուհեաց Բարեգ. Ընկ. դահլիճում (Պասկևիչի փողոց № 13) տեղի կունենայ Ընկերութեան ընդհանուր ժողովի շարունակութիւնը. վարչութիւնը պէտք է զեկուցանէ սեփական տուն ձեռք բերելու խնդրի վերաբերմամբ, և յետոյ տեղի կունենան ընտրութիւններ։

◆ Թիֆլիսի քաղաքային դումայի իրաւասու Ա. Փրիդօնեանը մի յայտարարութեամբ, ուղղված քաղաքագլխին, անհրաժեշտ է համարում ինքնաշարժ կառքերի երթեւեկութեան կանոնաւորումը, նրանց առաջընթացութեան և արագութեան ծայրայեղ չափի որոշումը, այլ և երթեւեկութեան սակագնի ու ինքնաշարժների կառավարողների համազգեստի միօրինակութեան հաստատումը։

◆ Ռազմավիրական ճանապարհի Գուդաուր-Կրեստ կայարանների միջև հաղորդակցութիւնը վերականգնված է։

◆ Նուխու շրջանից մեզ հաղորդում են, որ վերջին ցուրտ եղանակների և տեղացած ձիւնի պատճառով ցանքերը և պտղատու ծառերից շատերը ցրտահար են եղել։ Վարդաշէն գիւղի շրջանում երկիրը ծածկվել է ձիւնի հաստ շերտով։

◆ Միջնորդութիւն է յարուցված բարձրագոյն իշխանութեան առաջ՝ այս 1912 թ. աշնանը կովկասեան բամբակագործների համագումար հրաւիրելու նկատմամբ։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը ստացել է յօգուտ դպրոցական-ուսուցչական ֆոնդի՝ 1) Գրօզնայի ծխ. դպրոցի հոգաբարձու Գր. Գուրգէնեանից 14 ր.՝ հանգանակված զանազան անձանց շրջանում, 2) Թիֆլիսի 2-րդ փոխ. վարկի ընկ. ծառայողներից Մ. Աֆրիկեանի միջոցով 11 ր. 75 կ. և 3) Թիֆլիսի 2-րդ փոխ. վարկի ընկերութիւնից 100 ր.։

◆ «Նախալօվկա» անունը վիրաւորական համարելով, յիշեալ քաղաքամասի բնակիչները խնդրում են քաղաքային վարչութեանը փոխել այդ անունը իր հայհոյողութեամբ։ Մտադրութիւն կայ յիշեալ քաղաքամասը Անդրկայարանեան (Завокзальная) անուանել։

◆ Ապրիլի 13-ին Թիֆլիսի երկրորդ կարգի վաճառական Միքայէլ Փարսադանեանը յայտնեց խուզարկու ոստիկանութեան գլխաւորին, որ ապրիլի 6-ին Թիֆլիսեցի վաճառականներ Ալէքսանդր և Կարապետ Տէր-Գալստեանները խաբէութեամբ իր խանութից վերցնելով ապրանք՝ այժմ անհետացել են։ Ապրանքը գտնված է ներկայիս եղբ. Տէր-Գալստեանների խանութում և յանձնված է նրանց հօրը՝ ի պահպանութիւն, մինչև այս գործի դատարանով վճռելը։ Յիշեալ վաճառական եղբայրները նոյնպիսի խաբէութեամբ ուրիշ վաճառականներից ևս ապրանք են գնել, յետագայում վճարելու պայմանով, որպիսի խոստումը ի կատար չեն ածել։

◆ Մօսկվայից մեզ գրում են ապրիլի 13-ից. «Ապրիլի 8-ին, կիրակի, Մօսկվայի ս. Խաչ եկեղեցում, ի պատիւ Ամենայն Հայոց Հայրապետ Գէորգ Ե. Կաթողիկոսի գահակալութեան, Աշոտ եպիսկոպոսը մատուցեց պատարագ։ Կայսերական Տան յիշատակութիւնից յետոյ՝ կարճ, բայց օրվայ շատ յարմար քարոզով պատարագիչը՝ երկարակեցութիւն ու աստուածային շնորհ և աջողութիւն մաղթելով Նորահաստատ Վեհափառին՝ բազմութեան առջևը դրեց մեր նախկին կաթողիկոսների կատարած ազգօգուտ, խելացի ու իմաստուն գործերը։ Յետոյ դառնալով դէպի բեմը, առաջին անգամը լսելի արեց «Եւս առաւել վեհափառ հայրապետեան մեր» խօսքերը։ Հանդիսին ներկայ էր և՝ Ղարաբաղի թեմի կառավարիչ՝ Զաւէն վարդապետը։ Պատարագի վերջը, մեր թեմի առաջնորդի հեռագրական կարգադրութեամբ, կատարվեցին կայսերական ու հայրապետական մաղթանքներ։

◆ Աստրախանից մեզ գրում են, որ Կարապետ Ալաճալեանի՝ Մօսկվայում մահանալու լուրը ամսիս 6-ի երեկոյեան հէնց որ ստացվել է Աստրախանում, այդ տեղի հայ հասարակութիւնն իսկոյն դիմել է հանգուցեալի բնակարանը և հոգեհանգիստ կատարել տուել։ Երկրորդ հոգեհանգիստը կատարվել է ամսիս 8-ին նոյն քաղաքի Աստուածամօր եկեղեցում Աստրախանի երգ.-հաւատարմատարների և սրանց օգնականների նախաձեռնութեամբ։ Հոգեհանգստից յետոյ կայացել է ծխ. բազմամարդ ժողով Կար. Սօբօլեանի նախագահութեամբ՝ հանգուցեալի յիշատակը յաւերժացնելու մասին խորհրդակցելու։ Ժողովը որոշել է. 1) ուղարկել ցաւակցական հեռագիր, 2) Աստրախանի հայ հասարակութեան կողմից ներկայացուցիչ ունենալ թաղմանը, 3) դնել դագաղի վրա արծաթէ պսակ նոյն հասարակութեան կողմից 200 ր. արժողութեամբ և 4) հիմնել նրա անուանը ստիպենդիա Մօսկվայի համալսարանի իրաւաբանական բաժնում։ Այդ վերջին կէտը իրագործելու համար ընտրվել է մի մասնաժողով։ Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հանգուցեալը թաղվելու էր Մօսկվայում ամսիս 9-ին, Աստրախանի հայութեան կողմից ընտրվել է Մօսկվայում ապրող աստրախանցի երդուեալ-հաւատ. Սարգիս Խաչատրեանը։ Աստրախանից Մօսկվա ուղարկվել են բազմաթիւ ցաւակցական հեռագիրներ և պսակներ ծանօթների և հիմնարկութիւնների կողմից։

◆ Ոմն Քիչի-օղլի յայտնել է Արմաւիրի քննիչին, որ Բագւում վերջերս սպանված մօլլա Ախունդովին ինքն է սպանել, իր՝ սպանողի կնոջ ապահարզան տալուն համար։

◆ Ներկայիս դադարած՝ Գանձակում հրատարակվող «Южный Кавказъ» թերթի խմբագիրը, որը գրական գործի համար բանտ էր դրված, ձերբակալված է։

◆ Ապրիլի 16-ին, գիշերով, քաղաքային ոստիկանութեան կարգադրութեամբ խուզարկվեց Վրաց երիտասարդ բանաստեղծ, Վրաց ազնուականութեան գիմնազիայի սան Կիկնա Փշավէլայի (Բաղուրաշվիլի) բնակարանը։ Տարված են ձեռագիրներ։ Նոյն գիշերը խուզարկութիւններ են կատարվել նմանապէս յիշեալ գիմնազիայի այլ աշակերտների բնակարաններում։

◆ Մայիսի սկիզբներում Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան օգտին տեղի կունենայ զբօսանք, Վրաց ազնուականութեան թատրոնի այգում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ. ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական Տան Թատրոնում

Հաճելի տպաւորութիւն թողեց մեզ վրա անմոռաց դրամատուրգ Գ. Սունդուկեանի յիշատակին կազմակերպված երկրորդ ներկայացումը Զուբալովի անուան Ժողովրդական Տանը, յիշեալ տան կից գործող հայկական ներկայացումներ կազմակերպող սեկցիայի աջակցութեամբ, երբ խաղացվեց մեծանուն դրամատուրգի 4 գործ. «Խաթաբալան»։

Պիէսի յոյժ աշխոյժ երգիծանքը, առողջ հումորը, տեղական հին տիպերի բերանով խօսող ժողովրդական փիլիսոփայութիւնը, նրանց ռէալականութիւնը և նրանում պատկերացված, և շատ ցայտուն կերպով, իրական դէմքերը մարդուն մտածել են տալիս, որ թէ այս և թէ հանգուցեալ դրամատուրգի միւս պիէսները դեռ երկար ժամանակ պիտի պահվեն մեր բեմի վրա որպէս անհրաժեշտ զարդ, գեղեցիկ պաճուճանք։ Թերևս նրա երկարատև կենսունակութիւն ունենալու հանգամանքը անհասկանալի մնայ ոչ թիֆլիսեցիների և առ հասարակ Թիֆլիսի բարբառին և տիպերին անծանօթ անձանց համար, բայց այդպէս չէ լինելու բուն Թիֆլիսեցիների համար, որոնք դեռ երկար ժամանակ պիտի վայելեն Գ. Սունդուկեանի գեղեցիկ վրձինով նախշած պատկերների անուշութիւնը։

Դառնալով դերակատարներին՝ պիտի ասենք, որ նրանք ամեն ջանք ի գործ դրին պիէսի թելադրանքներին հարազատ մնալու, թէև այդ նրանց լիապէս չաջողվեց, և հասկանալի է թէ ինչու։ Որովհետև այդ տիպերը անդարձ անցեալի սեփականութիւն են արդէն։ Դերակատարները կաղում էին մանաւանդ Թիֆլիսի բարբառի հարազատօրէն արտասանութեան կողմից, թէև նրանք կարող էին հարազատ մնալ բարբառին, քանի իրանց առաջն ունեն հանգուցեալի ամենայն խնամքով տպագրված պիէսը, բայց և այնպէս սխալներ արվում էին։

Ինչ արած. չէ՞ որ արդի կեանքը քաղքցիների լեզուն յետ է մղել, ու վերջինս տեղի է տուել գրական լեզուի առաջ։

Նկատենք սակայն, որ Ց. Տէր-Գրիգորեանի Գարասիմ Եակուլիչ Զամբախովը բաւական տիպիկ էր, թէև նրա մենախօսութիւնները երբեմն առ երբեմն վարդապետական քարոզի բնոյթ էին ստանում։ Ցամենայն դէպս նա աջող էր Զամբախովի դժուարին դերում։ Տ. տ. Ցասմիկ (Խամբերի) և Ս. Վարդիթեր (Քեթեան) բաւարար կերպով տարան իրանց դերերը, բայց աւելի աջող կը լինէին, եթէ նրանցից առաջինը մի քիչ աւելի լրջութիւն տար Մասխեանի մօր դերին, իսկ վերջինս էլ երբեմն Թիֆլիսեցու կնոջ համար խորթ հնչիւններ չարտաբերէր խօսակցութեան ընթացքում։ Տիկ. Մանուչարեանի Մարգարիտը թոյլ էր։ Փիրումեանին տեղ-տեղ միայն աջողվում էր միամիտ Իպալիի դերը, իսկ երբեմն էլ բեմի վրա եղած ժամանակ ինչ-որ անյարմար դրութեան մէջ էր ընկնում և չը գիտէր, թէ ի՞նչ անէր. կարճ ասած՝ չը խօսած ժամանակ չէր խաղում, միմիկան պակասում էր։ Տ. Արաքսեանի Նատալիան կենսուրախ չէր. աւելի աշխուժութիւն էր հարկաւոր։ Ցովհաննիսեանին և Ղուշչեանին իրանց դերերն էին հետաքրքրական դարձնում։

Վերջում դրվեց կենդանի պատկեր՝ «Պէպօյի արձանը», որը անաջող կարելի էր համարել, մանաւանդ Գ. Սունդուկեանի ստուերը, որ երբէք նմանութիւն չունէր հանգուցեալին։

Թատրոնը լի էր հասարակութեամբ։

Ա.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Պետերբուրգ, 5 ապրիլ

Մարտի 30-ին Պետերբուրգի Բլօգորօդնի ժողովարանի դահլիճում կայացաւ հայկական կոնցերտ-երեկոյթ յօգուտ հայ չքաւոր ուսանողների։

Կոնցերտի ծրագիրը շատ ճոխ և բազմակողմանի էր կազմված, շնորհիւ մեր տաղանդաւոր օպերային երգիչ յայտնի բաս Մակարեանի, որին սկզբից ուսանողները դիմել էին, և նա մեծ պատրաստակամութեամբ յանձն էր առել երեկոյթի կոնցերտային մասի կազմակերպումը։

Կոնցերտում բացի ռուս յայտնի արտիստներից մասնակցում էին նաև տեղիս հայ ոյժերը՝ Ամիրջան, Կարակաշ (կայսերական թատրոնի երգիչ), երգիչ Վարդ, պրօֆ. Նալբանդեան, Մակարեան. երգում էր նաև հայկական ուսանողական երկսեռ քառաձայն խումբը, բաղկացած մօտ 50 հոգուց, ղեկավարութեամբ կոնսերվատորիայի ուսանող Ա. Տէր-Ղեւոնդեանի։

Ընդհանրապէս կոնցերտը անցաւ շատ աջող, որ հետևանք էր Մակարեանի կազմակերպչական հմտութեան, թէև զուտ հայկական քի՛չ բան կար. միակ պակասութիւնը՝ այդ «զուտ հայկականի» քիչ լինելն էր, որը, իմ կարծիքով, հայկական երեկոյթում պէտք է գերակշռողը լինէր. միակ խումբը չէր կարող այդ բացը լրացնել. թէև նրա երգած «Սարերի վրով գնաց», «Անճրևն եկաւ», «Ծաղկոց մայր» (ներդաշնակ. Ա. Տէր-Ղեւոնդեանի), «Արիք Հայկազունք», «Մեր հայրենիք» մեծ տպաւորութիւն գործեցին հանդիսականների վրա և ընդունվեցին բուռն ծափահարութիւններով։

Կոնցերտից յետոյ եղան պարեր՝ հայկական՝ հայ երաժիշտների մասնակցութեամբ և եւրոպական, որոնք տևեցին մինչև գիշերվայ 4 ժամը։

Պէտք է խոստովանենք, որ հայ գաղութը վաղուց սպասում էր հայկական երեկոյթին և շտապել էր մեծ թւով ներկայ լինել. կային նոյնպէս շատ օտարազգիներ, որոնք գոհ սրտով և ուրախ տրամադրութեան տակ հեռացան ժողովարանից։

Ընդհանուր մուտք եղաւ 1950 ր., իսկ զուտ արդիւնք մնաց մօտ 1000 ր., որը մնալու է ուսանողական կասսայում։

Գ. Կորժինեանց

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Գարնանային ջրեր», Ի. Ս. Տուրգենեվի, Թարգմ. Լ. Դանիէլեանի, 286 երես, 1912 թ.

Մեզանում ռուսական լաւագոյն գրողների երկերից շատ քչերն են թարգմանված։ Տուրգենեվ, Դոստոեվսկի, Տոլստոյ—ռուս գրականութեան այդ կոլոսները թարգմանված են եւրօպական գրեթէ բոլոր լեզուներով, մինչդեռ հայերէն լեզուով շատ քիչ բան է թարգմանված այդ հեղինակների գլուխ գործոցներից։ Մի տեսակ անյետաձգելի անհրաժեշտութիւն պէտք է համարել թէ ռուս և թէ եւրօպական կլասիկների նշանաւոր երկերի թարգմանութիւնը հայերէն լեզուով։ Թարգմանութեան գործը պէտք է դրված լինի սիստեմատիկ հողի վրա. դա մի բարդ և դժուարին գործ է. իրագործել այն՝ հնարաւոր է բացառապէս ձեռնհաս մարդկանց կօլլեկտիվ ոյժերով։

«Գարնանային ջրերը» Տուրգենեվի պարզ և անպաճոյճ գրուածքներից մէկն է. հեղինակի լեզուի սահունութիւնն ու պարզութիւնը գրաւիչ են ու տրամադրող։ Չը նայելով որ այդ պատմուածքի մէջ նշանաւոր տեղ են բռնում ռօմանտիկ ուղղութեանը յատուկ զուգադիպութիւններն ու անակընկալները, այնու ամենայնիւ գրուածքը կարդացվում է ամենայն հետաքրքրութեամբ։ Այդ բանին անշուշտ խոշոր չափով նպաստում է նաև պատմուածքի թարգմանական լեզուն, որ այնքան սահուն է ու յղկված։ Թարգմանիչ Լ. Դանիէլեանը, ըստ երևոյթին, ջանք չէ խնայել մաքուր գործ հանդէս բերելու համար, թէև «Գարնանային ջրերի» թարգմանութեան մէջ էլ կան, առաջին մի քանի երեսներում, թարգմանական թերութիւններ, որոնք սակայն այնքան աննշան են, որ դրանց վրա կանգ առնել չարժէ. բաւական է, որ թարգմանիչը ինքը դարձնէ այդ բանի վրա անհրաժեշտ ուշադրութիւնը։

Խորհուրդ կը տայինք նրան աստիճանաբար թարգմանութիւններ կատարել միևնոյն ռուս նշանաւոր գեղարուեստագէտի միւս առաջնակարգ գրուածքներից, որոնք իբրև տիպական գեղարուեստական խոշոր գործեր՝ հայոց գրականութեան մէջ կը բռնէին իրանց յատուկ կարևոր տեղը։

Ներկայ թարգմանութիւնը տպված է Կ. Հ. Բ. Ընկ. Ա. Պօղոսեանի գրական ֆօնդի արդիւնքով, որով և բացատրվում է գրքի միանգամայն մատչելի գինը. 286 երեսանոց գիրքը արժէ միմիայն 35 կոպէկ։

Ս.

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Քննադատական դրութիւններ», Ցովակիմ Սօլօվեանի, հատոր Ա. (Ժամանակակից հայ քնարերգութեան փիլիսոփայութիւնը), Թիֆլիս, 1912 թ., էջ 233, գինն է 50 կ.։ 2) «Ցովհաննէս Թումանեան՝ հայրենի եզերքի քնարերգուն», Արսէն Տէրտէրեանի, Վաղարշապատ, 1912 թ., էջ 82, գ. 30 կ.։ 3) «Զրոյց երկնքի գաղտնիքների մասին», կազմեց Գէորգ Մխիթարեանց, Թիֆլիս, 1912 թ., էջ 34, գ. 15 կ.։ 4) «Սիրտ գրքից ծնողների նամակները որդուն», Էդմօնդօ դէ Ամիչիսի, թարգմ. Քամալեանց Ս.-ի, Թիֆլիս, 1912 թ., էջ 38, գ. 15 կ.։ 5) «Գարնանային ջրեր», Իվ. Ս. Տուրգենևի, Թարգմ. Լ. Դանիէլեանի, Թիֆլիս, 1912 թ., էջ 286, գ. 35 կ.։ 6) «Լէյլի-Մէջլում» (հայ-քիւրդական սիրերգ), քիւրդերէնէ փոխադրեց Ջիթունի, Մարզուան, 1911 թ., էջ 19-րդ. 1 ղրուշ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Աստրախան, 12 ապրիլ

Պատիւ ունեմ ուղարկել «Մշակ» լրագրի խմբագրութեանը քսան հինգ (25) րուբլի՝ գործադրելու Գաբրիէլ Նիկիտիչ Սունդուկեանի Պէպօյի արձանի կառուցման համար, ըստ խմբագրութեան հայեցողութեան

Աստուածատուր Աղամեան

ՄԵՐ ԼՈՒՄԱՆ

(Նամակ խմբագրութեան *)

Մարտի 28-ին մի փոքրիկ ճաշկերոյթ կար Ռուբէն Խանզադեանի տանը։ Հիւրերի թիւն էր 12, որոնց մէջ կային տիկնայք, ժուռնալիստներ, ուսուցիչներ, դերասաններ, մի բժիշկ և մէկ հանքաբան։ Հիւրերի ցանկութեամբ և խնդրանօք ես ընտրվեցի թամադա։ Ճաշկերոյթը կրում էր վերին աստիճանի մտերմական և ուրախ բնաւորութիւն։ Ճաշի կէսին Աշոտ Աթանասեանը խնդրեց ինձ երգել կուպլէտներ. ես յանձն առայ պատմել մի պատկեր, միայն այն պայմանով, որ ինձ թոյլ տրվի մի փոքրիկ ժողովարարութիւն անել որոշ նպատակով։ Սեղանակիցներս ուրախութեամբ համաձայնվեցին, իսկ երբ ես յայտնեցի նպատակս՝ Պէպօյի արձանի օգտին, դիմաւորեցին ծափահարութեամբ և, լսելով իմ կարդացած պատկերը, ներկայ եղողները հաւաքեցին 25 րուբլի։ Դրանով ես բարի նախանձ շարժեցի իմ միւս ընկերոջ մէջ, որը նոյնպէս յանձն առաւ պատմել մի պատկեր, նոյն նպատակով. դա էր յայտնի դերասան Ալէքսէեվ-Մեսխիևը, որը կարդաց «У парадного подъѣзда» պատկերը և հաւաքեց նոյնպէս 15 ր., այնպէս որ ներկայ եղող փոքրիկ խումբը յօգուտ Պէպօյի արձանի նուիրեց 40 րուբլի, որի համար ես հրապարակօրէն յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը տանտիկնոջը և սեղանակիցներին իբր թամադա և ջատագով Պէպօյի արձանի։

Փողը հաւաքելուց յետոյ ես յայտնեցի ներկայ եղողներին, որ մեր այս գումարը յատկացնում եմ միմիայն Պէպօյի արձանին՝ առանց կապելու թատրօնական շէնքութեան հետ, որովհետև դրա իրագործմանը չնչին գումարով մօտիկ ապագայում ես չեմ հաւատում, այն ինչ Պէպօյի արձանի կանգնեցնելը շատ շուտ իրագործելի է, եթէ հայ հասարակութիւնը ակնածութեամբ վերաբերվի մեծ դրամատուրգի կտակին։ Սեղանակիցները տուին իրանց համաձայնութիւնը և յանձնարարեցին ինձ 40 րուբլին յանձնել «Մշակ» լրագրի խմբագրութեանը, որը և ներկայացնում եմ ընդ սմին։

Գեղէոն Միրաղեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ներկայումս Եգէյեան ծովում մնացել են իտալական 30 ռազմանաւ զանազան տիպի։ Մնացեալները վերադարձել են Իտալիայի ափերը.

◆ Թիւրքաց զինուորական մինիստրութիւնը կտրականապէս հերքում է մամուլի այն տեղեկութիւնը, թէ Տրիպօլիսում կռւող թիւրք զօրքերի հրամանատար Էնվէր-բէյը մեռել է ստացած վէրքերից։ Մինիստրութիւնը հեռագիր ունի Էնվէր-բէյից, ուղարկված ապրիլի 8-ին.

◆ Թիւրքիան պաշտօնապէս բողոք ուղարկեց եւրօպական բոլոր մեծ պետութիւններին՝ իտալացիների ձեռքով Դարդանէլը ռմբակոծվելու առիթով։

◆ Անգլիական լրագրների ասելով, Ցունաստանի և Բօլգարիայի միջև կապվել է համաձայնութիւն, որի ոյժով այն դէպքում, եթէ Իտալիան աջողութիւն ունենայ Եւրօպական Թիւրքիայում, նրանք պարտաւոր են աջակցել Մակեդօնիայի ապստամբութեան։

◆ Իտալիան վճռել է նորից վճռական յարձակում գործել Դարդանէլի վրա։ Այդ նպատակով ուղարկվում են Բօսֆօրի ուղղութեամբ իտալական երկու դիրիժաբլ, 148 լիքը մեծ ռումբերով, որոնց սոսկալի գործողութիւնները նորերս յայտնի դարձան։

◆ Արտասահմանեան լրագրների ասելով, հէնց որ ռուսական ռազմի նաւատորմը Բօսֆօր մտնէ, ճիշդ միևնոյն ժամանակ բօլգարական զօրագնդերը կանցնեն թիւրքական սահմանները։

◆ Բերլինի լրագրներին հեռագրում են Կ. Պօլսից, որ ռուսական զօրքերը կենտրօնանում են կովկասեան սահմանագլխում։ Ռուս-իտալական միացեալ գործողութիւնների պլանը մշակված է։ Այս տեղեկութիւնները սակայն հերքվում են ռուսաց պաշտօնական մարմինների կողմից։

◆ Թէհրանում ռուսական վերջին գործողութիւնները չափազանց գրգռել են պարսիկ հոգևորականութեան։ Մօլլաները սրբազան պատերազմ են ըսպառնում բոլոր եւրօպացիներին։

◆ Պարսից կառավարութիւնը ցենզուրան վերահաստատեց։

◆ Մօնղօլիան կազմակերպել է ըսկսել իր զօրքերը Չինաստանի դէմ։ Հրահանգիչներ հրաւիրված են ռուսներ։

◆ Վատիկանում խօսում են, որ շուտով Կ. Պօլսից յետ է կանչվելու պապի նուիրակը այն միջադէպի պատճառով, որ ծագեց վատիկանի և հայ-կաթօլիկների միջև Թերզեան պատրիարքի առիթով։

◆ Պարսկական Բէլուջիստանում վայրենի ցեղերը ասպատակում են և կողոպտում Քիրմանը և շրջակայքը։

◆ Ֆէզում ֆրանսիական զինուորական դատարանների վճիռներով ապստամբները հրացանազարկվում են։

◆ Լէնայի դժբաղդութեան առիթով Պետերբուրգում տեղի ունեցած ուսանողական ցոյցերը առիթ տուին բազմաթիւ խուզարկութիւնների և ձերբակալութիւնների, որոնք դեռ շարունակվում են։

◆ Ինչպէս երևաց, «Вечер. Вр.»-ի ակնարկած լրտես փոխ-գնդապետը Մեասօեդօֆն է։ Վերջինս ձիարշաւի ժամանակ ծեծել է լրագրի խմբագիր Բօրիս Սուվօրինին։

◆ Պետերբուրգում լուսանկարչական ցուցահանդէսի հետաքրքրաշարժ մասը այն նկարներն են, որ Դաշնակցութեան գործի առիթով էկսպերտների երևան հանած խարդախված փաստաթղթերին են վերաբերում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

17 ապրիլի

ՊԱՐԻԶ։ Արտաքին գործերի մինիստրութեան բաժանմունքի նախկին վերատեսուչ Գամօնը, որ մեղադրվում էր 216,000 ֆր. վատնելու և կեղծիքների մէջ, դատապարտվեց հինգ տարով բանտարկութեան և 20 հազար ֆրանկ տուգանքի։

ՀԱՄԲՈՒՐԳ։ Տէրերի միութիւնը տասն օրով լօկաուտ ենթարկեց գործադուլ յայտարարած բանուորներին։ «Վուլկան» նաւաշինարանի բանուորները գործադուլ արին։

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ Եկաւ Պարիզի քաղաքային ինքնավարութեան նախագահը։ Քաղաքը զարդարված է ֆրանսիական դրօշակներով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆինանսների մինիստրութիւնը նախագծում է հիմնել Պետերբուրգի նեարդային ինստիտուտին կից փորձնական կլինիքական ինստիտուտ ալքօհօլի ազդեցութիւնը մարդու օրգանիզմի վրա ուսումնասիրելու համար։ Ալքօհօլիկների բուժարանների համար մտադրութիւն կայ խնդրել 400,000 րուբլի։

ՄՕՍԿՎԱ։ Միապետականները վճռեցին Մօսկվայի երկրորդ կուրիայի կողմից անցկացնել Պետական Դումայի անդամ միապետական կուսակցութիւնների գործիչ Օրլօվին։

ԼՎՕՎ։ Կայացաւ պահպանողական կուսակցութեան լեհ ազդեցիկ քաղաքագէտների համագումարը։ Որոշվեց ընտրողական բարենորոգման ժամանակ ռուսներին տալ 25%-ից ոչ աւելի սէյմում։

«Прикарпатская Русь» լրագիրը մի շաբաթվայ ընթացքում գրաւվեց եօթ անգամ։

ԿԻԵՎ։ Նահանգապետը 12 հոգու բանտարկեց Լէնայի դէպքերի առիթով գործադուլի դրդելու համար։

---

[*] Նամակս ուշացաւ հիւանդութեանս պատճառով։ Գ. Մ.

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս (606), միզասեռական վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տէլէֆօն № 1175.
(Ե. Հ. Կ.) 888. 100—90

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

10 ՌՈՒԲԼԻ ԱՄԵՆ ՕՐ։
Հեշտ աշխատանք երկսեռ անձերի համար։ Ուղարկէք ձեր հասցէն Торг. Дому Бр. Любка. Лодзь. Отд. № 45.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(Կ. Հ.) (Л. 4738) 5—2

„ԳԻՐ“ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Մուրացան. «Գէորգ Մարզպետունի» . . . 1 ր. 20 կ.
Եսայեան Զ. «Աւերակներուն մէջ» 1 » —
Տէրեան, «Բանաստեղծութիւններ» 1 » —
Տուրգենեվ, «Գարնանային ջրեր» — 35 »
Սօլօվեան. «Քննադատական տեսութիւններ» . . — 50 »
Ռայդ. «Պատանի Թագաւոր» — 25 »
«Ցիշատակարան 400-ամեակի առիթով», պատկերազարդ, հատորը 3» —
Ֆլիրտ. «Ծաղիկների խաղարկզով» — 60 »
Ուղարկվում է գրախանութի գրացուցակը ՁՐԻ։
Դիմել՝ Тифлисъ, Книжный маг. „ГИРЪ“.
(Հ.) 258. 2—2

ՉՈՒԳՈՒՆ ՁՈՒԼՈՂ ու ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Գ. Զ. ԵԱՐԱԼՕՎ ԵՒ Կº ԱԿՑ. ԸՆԿ.

Թիֆլիսում, Կվիրիլսկայա փող. № 7, Անդրկով. երկ. վարչ. մօտիկ։
Ընդունում է պատուէրներ՝ կառուցումների, փականագործական (слесарныя), կաթսային, դարփնային, խառատային և զանազան մեխանիկական աշխատանքների համար։
Ընդունում է նոյնպէս պատուէրներ չուգունէ և պղնձէ ձուլուածքների՝ համաձայն տրված մակարդակների և կաղապարների։
Պատուէրներն ընդունվում են միանգամայն մատչելի գներով։
Գործարանը պատրաստում է նաև պարտիզի կահ-կարասիքներ։
(Ե. Հ. Կ.) 261. 10—1

ՆՈՐ ՎԷՊ
ԵՐՈՒԱՆԴ ԳՕՇ
ԿԱՐԱ-ԴԱՐՎԻՇԻ
(Ցակովբ Դեճջեան)
ԳԻՆՆ Է 50 Կ.
(Հ. Կ.)

Վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում, իսկ Բագու— „Сотрудникъ“ գրավաճառանոցում։
Հեղինակից բերել տալը ճանապարհածախս չէ վճարում։ Վերագիր վճարով 65 կոպ.։ «Ռուս նորագոյն գրողներ» (Սերիա՝ վեց գրքոյկ—Սօլօգուբ, Անդրէեվ, Այզման, Կուպրին, Մօրօզօվ, Դիմօվ) հետը միասին վերագիր վճարով 85 կոպէկ։
Тифлисъ, Іерусалимскій пер. № 12.
Պատրաստվում է տպագրութեան նոյն հեղինակի ֆէլիէտօնները՝ «Դժեր, Ներկեր» և պատմուածքների ժողովածուի առաջին հատորը՝ «Կարիեղներ» վերնագրով։
183. 10—9

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՅՈՎԱԿԻՄ ՍՕԼՕՎԵԱՆԻ
Քննադատական մի նոր աշխատութիւնը
Ժամանակակից հայ քնարերգութ. փիլիսոփայութիւնը
Գիրքը բաղկացած է 233 երեսից և բաժանված է երկու շրջանի. առաջին շրջանի մէջ մտել են՝ Ց. Ցովհաննիսեան, Ցովհ. Թումանեան, Լ. Մանուէլեան և Ս. Ծատուրեան, իսկ երկրորդի՝ Ց. Ցակոբեան, Ա. Իսահակեան, Շ. Կուրղինեան, Վ. Տէրեան և քննադատ Ա. Տէրտէրեան։
Գինն է 50 կոպ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և Բագւում՝ «Сотрудникъ» գրախանութին։ Գումարով գնողներին՝ «Հերմէս» տպարան, Թիֆլիս, Գրաֆսկայա փողոց, որտեղ 10 օրինակ գնողը կը ստանայ 20% զեղչ։ Հեղինակի հասցէն՝ Тифлисъ, редакція „Агбюръ-Таразъ“.
(Հ. Կ.) 199. 10—7

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից

1) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I . . . գ. 1 ր. —
2) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրժինի, I և II հատորներ . . . . 1 ր. 50 կ.
3) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . — 50 կ.
4) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ Քամալեանց Ս-ի . . — 50 կ.
5) ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . . 1 ր. —
6) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի . . . — 40 կ.
7) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, Թարգմ. Արշակ Սաֆարեանի 1 ր. 50 կ.
8) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, Թարգմ. գերմ. Իս. Ցարութիւնեանի, — 50 կ.
9) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտական վէպ Կամիլ Ֆլամարիօնի. Թ. Հ. Առաքելեանի 1 ր. 50 կ.
10) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ. . . 1 ր. 20 կ.
11) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի . . . . — 40 կ.
12) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդօյի, Թարգմ. Հ. Առաքելեանի . — 60 կ.
13) ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ, բժշկպ. Գ. Բաբեանի
I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն . . . 1 ր. —
II » Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան . . . . 1 ր. 60 կ.
14) ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ, բժ. Ս. Բուդուղեանի . . . . — 5 կ.
15) ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ խօլերայի մասին, բժ. Վ. Արծրունու . . — 15 կ.
16) ՋԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանաստեղծութեան, Հ. Առաքելեանի . . . . — 50 կ.
17) ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐԸ, Հ. Իբսէնի, Թարգմ. Լ. Բաբայեանի — 50 կ.
18) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, Թարգմ. Հ. Առաքելեանի . 1 ր. —
19) ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԵՄՔՈՒՄ, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Ք.-ի — 40 կ.
20) ՆՇԱՆՎԱԾՆԵՐ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի . . . — 60 կ.
21) ԷԴՄՕՆՏ, ողբերգ. 5 գործ. Վ. Գ. Գէօթէի, Թարգմ. Հ. Մաժինեանի — 50 կ.
22) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, Լ. Ն. Տօլստոյի, Թարգմ. Սուրխաթեանի . — 30 կ.
23) ԿՈՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), Լ. Ն. Տօլստոյի խմբագրութեամբ կազմեց Ա. Բուլանժէ, Թարգմ. Սուրխաթեանի . . . — 7 կ.
24) ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ ՄԱՀՕՄԷԴԻ, ընտրված Լ. Տօլստոյի, Թ. Լ. Դանիէլեանի — 5 կ.
25) ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԷԿ Է, Լ. Տօլստոյի, Թարգմ. Լ. Դանիէլեանի — 5 կ.
26) ՔՈՅՐԵՐԸ, Լ. Տօլստոյի, Թարգմ. Լ. Դանիէլեանի . . . — 5 կ.
27) ԻՆՉՈ՞Վ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, Լ. Տօլստոյի, Թարգմ. Լ. Դանիէլեանի — 10 կ.
28) ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Պետրոս Ադամեանի . . . . . 1 ր. —
29) ՑՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի . . . — 40 կ.
30) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեվագրութիւն), Ստ. Մալխասեանցի . — 20 կ.
31) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի — 35 կ.
32) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՑԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով . . — 15 կ.
33) ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ, Ե. վ. Տէր-Մինասեանի — 25 կ.
34) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ. Մ.-ի — 15 կ.
35) ՃԱՊՈՆԻԱ կամ Ծագող Արեգակի երկիրը, Գ. Ի. Շրէյդէրի . . — 25 կ.
36) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի . — 30 կ.
37) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի — 25 կ.
38) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ. Մակ. եպ. Բարխուտարեանի — 80 կ.

Նրանք, որոնք կը դիմեն մեզ՝ պահանջելով վերոյիշեալ գրքերից 5 րուբլուց բարձր գումարի՝ կը ստանան 25% զեղչ։ 10 ր. բարձր գումարի պատուէր տուողներն ստանում են 30% զեղչ։
«Մշակի» բաժանորդներից նրանք, որոնք վերոյիշեալ բոլոր գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն, կը ստանան 40% զեղչ։
ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ։ 50—14

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, Թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՑՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տէլէֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.